№ 101 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 13

1906

ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 13 № 101

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆՂԲԱՅՐՔ
ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

Առևտրական խանութը սոյն ապրիլի 1-ից ՓՈԽԱԴՐՎԱԾ է Սիօնի փողոցից Ա. Մանթաշեանի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազազխանայի կից։

Մուտքը բազազխանայից եւ Մանթաշեանի շարքերից (Манташ. ряды) №№ 30, 31, 32, 33, 40 և 41.

(Կ. շ. ու.) առ. 7—10

Շարունակվում է 1906 թ. «ՄՈՒՐՃ» ամսագրի բաժանորդագրութիւնը

Ամսագրի № 6-ից տպվելու է իբրև երկրորդ յաւելուած պ. Լէօի «ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ» ընդարձակ ուսումնասիրութիւնը փաստաթղթերով։

Բաժանորդագինը Ռուսաստանի և Պարսկաստանի համար տարեկան 10 րուբլի, արտասահմանի համար 12 րուբլի։ Ծխական դպրոցների ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանուորների համար բաժանորդագինն է ՈՒԹ ՐՈՒԲԼԻ։ Բաժանորդագրութիւնը ընդունվում է. Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փող. № 13) և «Գուտտենբերգ» գրախանութում։ Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію «Мурчъ». Արտասահմանից—Tiflis, Rédaction de la revue «Mourtch».

(առ) 3—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդական իրաւունք. Վերջին տեղեկութիւններ. Թիֆլիսի ընտրութիւնները. Փոխարքայի շրջաբերականը գեներալ-նահանգապետներին. Տեղեկութիւններ գաւառից. Թիֆլիս քաղաքի լիազօրները. Եակօվլեվ. Հետաքրքիր կուսակցութիւն. Դատաստանական դահլիճից. Ազգային տերրիտորիալ ինքնավարութիւն. Մի դասախօսութիւն. Բագէի երգը. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ։ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

I

Վեհափառ Կաթողիկոսը յատուկ կոնդակով վերականգնել է հայ ժողովրդի իրաւունքները իր եկեղեցական և դպրոցական գործերում։

Ընտրողական սկզբունքը և ժողովրդի մասնակցութեան սիստեմը այսուհետև պէտք է համարվեն հիմք բոլոր այն վարչական հաստատութիւնների և հիմնարկութիւնների մէջ, որոնք մինչև այժմ կապ են ունեցել հոգևորականութեան հետ։

Մենք դեռ չենք տեսել կոնդակը և անծանօթ ենք նրա բովանդակութեան հետ մանրամասնօրէն։ Բայց եթէ, արդարև, նա իր մէջ լիովին ամփոփել է այն իղձերը, որ հայ ժողովուրդը և հայ մամուլը տարիների ընթացքում պարզել են և արտայայտել, այն ժամանակ մենք կարող կը լինենք ջերմագին շնորհաւորել մեր ժողովրդին, որ նա վերջապէս առնում է դրական կերպով լուծված մեր հերթական և ընթացիկ խոշոր հարցերից մէկը։

II

Դպրոցը ժողովրդական, ազատ կամայականութիւններից—դա մեր ամենամեծ ցանկութիւնն է եղել։ Որքան ծանր օրեր ենք քաշել մենք հոգևորականութեան այն անվերջ միջամտութիւններից և բռնութիւններից, որոնք հալումաշ էին անում մեր կրթական գործը։

Բայց դպրոցից դուրս գտնվող պաշտօնէութիւնները, ինչպէս օրինակ, առաջնորդները, յաջորդները, սինօդը, կոնսիստորիաները, գործակալութիւնների մէջ գործողները, և ուրիշ պաշտօնեաներ, մինչև այժմ չէին ընտրվում ծխականների կողմից և չէին ենթարկվում ժողովրդի կոնտրոլին։

Ժամանակի ոգին վաղուց պահանջում էր բաւարարութիւն տալ ժողովրդական պահանջներին։ Եւ առանձին դէպքերում, ինչպէս օրինակ, Աստրախանի վերաբերութեամբ, անվում էին դրական քայլեր, բայց ընդհանրապէս շարունակվում էր հինը և որը դժբաղդաբար յաճախ ընդունում էր շատ տխուր և անտանելի կերպարանք։

Այժմ մեզ խոստանում են քաւել բոլոր հին մեղքերը և վերադարձնել ժողովրդին նրանից խլած իրաւունքները։

Վերջապէս։

III

Մեզ համար մի բան մնում է անբացատրելի։

Ինչու ժողովրդական ներկայացուցիչները չէին հրաւիրվել մշակելու այն ժողովրդավարական կարգը, որ մտցնվում է եկեղեցական ինքնավարութեան մէջ։

Եթէ ժողովուրդն է իր գործերի տէրը, այն ժամանակ ինքը ժողովուրդն էլ իր ներկայացուցիչների ձեռքով կը մշակէր բարեփոխութեան ծրագիրը, որը ապա և կը հաստատվէր։

Մենք չը գիտենք. գուցէ կոնդակը պարունակում է իր մէջ ժողովրդական համագումարի մի հրաւէր և ինքը ժողովուրդը պէտք է քննութեան առնէ բարեփոխութիւնների ծրագիրը։

Այդ շուտով կը պարզվի։

Բայց յամենայն դէպս իբրև հիմնական սկզբունք պէտք է ճանաչվի այն, որ ամեն մի հիմնական և էական բարեփոխութիւն պէտք է կատարվի ժողովրդական ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Այլապէս մէկի տուածը կարող է խլել միւսը։

Իսկ համագումար ժողովը չէ կարող դաւաճանել ժողովրդական սկզբունքներին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածնից մենք ստացանք երկու մասնաւոր հեռագրեր, որոնք ցոյց են տալիս, թէ Ամենայն Հայոց Վեհ. Կաթուղիկոսը կոնդակով յայտարարել է եկեղեցական ինքնավարութիւն։

Մայիսի 11-ին

«Երէկ, մայիսի 10-ին, երեկոյեան ժամը 7-ին Կաթուղիկոսը ստորագրեց մի կոնդակ, որով եկեղեցական սահմանադրութիւն է տրվում»։

Մայիսի 11-ին, երէկ, ժամը 10-ին.

«Եկեղեցական սահմանադրութեան հրատարակման առիթով այսօր պատարագից յետոյ, որ մատուցվեց ս. Իջման սեղանի առաջ, վանքի գաւթում կատարվեց հանդիսաւոր մաղթանք, ներկայութեամբ Կաթուղիկոսի, միաբանութեան և ժողովրդի խուռն բազմութեան։ Ոգևորութիւնը ընդհանուր էր. եկեղեցական սահմանադրութիւնը ընդունվեց հիացմունքով։ Կաթուղիկոսը շնորհաւորեց ժողովուրդը, որ երկարատև կեցցէներով ողջունեց ալեզարդ հայրապետին. Թնդացին կեցցէ Հայրիկ, ժողովուրդը և սահմանադրութիւնը»։

Տաճատ Վարդապետ

Մենք սպասում ենք մանրամասնութիւնների։

Մոսկվա, 12 մայիսի

Այստեղի հայ հասարակութիւնը ստանալով տեղեկութիւն հայոց եկեղեցական ինքնավարութեան վերականգման մասին, հեռագրեց Վեհափառ Կաթողիկոսին հետևեալը.

«Անսահման անձնուիրութեամբ և գոհունակութեամբ լցված մենք Ձեր բուն քրիստոնէական, լիուլի սիրոյ և վստահութեան համար դէպի ժողովուրդը և յայտնում ենք մեր անկեղծ երախտագիտութիւնը դէպի Ձեզ այն իրաւունքների համար, որ դուք տալիս էք ժողովրդին ամրացնելով նրա հաւատը և կապը եկեղեցու և Ձեր բարձր անձնաւորութեան հետ»։

—

Գանձակ, 11 մայիսի.

Քոչերը զօրաւոր հովանաւորութեան տակ բարձրանում են տափարակից լեռնավայրերը. նկատված է արդէն, որ այս տարի քոչւորները սովորական տարիներից շատ են։ Այդ շատութիւնը հետևանք է մի կողմից տիրապետող շոգերի, երաշտի, միւս կողմից այն անօրինակ սրտագին խնամքի, որը ցոյց է տալիս կառավարութիւնը դէպի քոչւորները. սար են բարձրանում այնպիսիները ևս, որոնք մի հատ ոչխար անգամ չունեն, բայց ձևացնում են իրանց հօտերի ու նախիրների տէր, միանալով քոչւորների այս կամ այն խմբին, ուղեկցելով որևէ հօտ կամ նախիր։ Բոլորն էլ բարձրանում են զինված, քանի որ քոչւորները շատ հեշտութեամբ զէնք կրելու իրաւունք են ստանում. յայտնի աւազակախմբերն անգամ քոչւորների դիմակ ծածկած բարձրանում են սարերը։ Գնալով քոչւորները իսկական ու կեղծ, վերջիններս աւելի ստուար թւով կենտրոնանում են լեռնային յայտնի կէտերում, ինչպէս են՝ Խաչ-Բուլաղ, Դիւզ-Իւրդ, Համամ-չայ և այլն, ու աւելի և աւելի սպառնողական դիրք ընդունում դէպի շրջակայ հայ գիւղերը։ Նորերս Խաչ-Բուլաղում պրօպագանդա են եղել անելիս յարձակվելու հարևան հայաբնակ Փիբ գիւղի վրա. Թուրքերի մի մասը, տեղական նստակեաց այրումները, չեն համակրել այդ մտքին, և նա չէ իրագործվել. պրօպագանդան անելիս են եղել եկւոր մութ տարրերը։ Մի խումբ սակայն ամսիս 8-ին յարձակվել է Շամքոր գետի հովիտում Փիբի հովիւների վրա ու փորձել է խլել նրանց ձեռքից հօտը. այդ չէ աջողվել, բայց հովիւներից մէկը սպանվել է Թուրքերի ձեռքով։ Սպանողները յայտնի են, և իշխանութեան կողմից ոչ մի քայլ չէ արված սրանց բռնելու համար։ Ուրիշ բան է եթէ կասկածն ընկնում է հայերի վրա։ Ռեպրեսիաներն իսկոյն գործադրվում են։ Զուրնաբադի ժանտախտային կայարանի ռուս ստրաժնիկներից մէկին սպանել են մերձակայ անտառում ու հրացանը տարել։ Չը նայած, որ նոյն րայօնում վխտում են Թուրք հրոսակախմբերը, մեղադրում են հայերին. 6 հոգի մուռուսեցի հայեր բանտարկված են արդէն այդ գործի համար։

Սա.

—

Խանքենդ-աւան, մայիսի 7-ին

Քոչը բարձրանում է։ Ամսիս 7-ին կը գան առաջին խմբերը։ Դրանք զինված պէտք է լինեն։ Կօզակներ են կանգնեցրվում ամեն տեղ հսկելու։ Գաւառապետ Ֆրէյլիխ, որ եկած օրից ընտանիքով ապրում է Աղդամում Թուրքերի մէջ, հեռագրական հրաման է տուել առաջին մասի պրիստաւին ընդ առաջ գնալ քոչւորներին և իր սահմանն անցկացնել անվտանգ։ Այնպիսի ցերեմօնիաներ են կատարվում, որ Թուրքերն էլ են զարմացել։ Սրանց պակասում է երաժշտական խումբը և մի մեծ դրօշակ։

—

Խանքենդ-աւան, մայիսի 8-ին

Ամսիս 7-ին առաւօտեան Թուրք քոչւորները արդէն հասել էին Շուշու ներքին հայոց հանգստարանին։ Դրանց ճանապարհը խճուղին է։ Քոչւորների շարժութիւնը բաւական կանոնաւոր է. նրանք գնում են շարան-շարան գրեթէ իրար եւևից, այնպէս որ մէկը տեսնում է միւսին։ Առ այժմ անախորժութիւն չէ պատահել։ Հայերը հսկում են իրանց արտերը՝ պահպանելու քոչւորների արածացնելուց։ Թուրքերը այդ հայերի հետ շատ քաղցր են խօսում, նզովում են «շէյթանին», որ իրանց և դարևոր քիրվաների մէջ հակառակութիւն սերմանեց։ Թէ ուրիշ ճանապարհներով էլ քոչ է բարձրանում, առ այժմ ստուգել չը կարողացանք։ Բալլուջայ գիւղում կանգնեցրված քոչւորների պահակը ուժեղացրելին, աւելացնելով 50 կօզակ։ Ընդամենը 150 կօզակ է. սա էլ աւելորդ է, եթէ Թուրքերը չարածացնեն հայերի արտերը, խոտհարքերը և եթէ առհասարակ նեղութիւն չը տան։

Խանքենդ-աւան, մայիսի 7-ին

«Մշակին» հաղորդել էի, որ Մալիբէկլուի Թուրքերը քշել տարել են Քառասնի գիւղի անասունները։ Պրիստաւը 25 կօզակներով գնաց Քառասնի և Մալիբէկլու։ Թուրքերը իրանց կողոպուտը ծածկելու համար պատրուակ բերին, որ իրանք անասուններ չեն քշել, այլ հայերը իրանցից բռնել են մի Թուրքի։ Պրիստաւը չը կարողացաւ ոչ կորած Թուրքին գտնել, չը նայելով որ դրա համար 2—3 գիւղ ման եկաւ և ոչ հայերից խլված անասունները յետ դարձնել։ Քառասնից տարված են 39 եղջիւրաւոր անասուն։ Պրիստաւը Մալիբէկլու գնացած ժամանակ իր հետ տարել էր և երկու հայ ստրաժնիկ, բայց Թուրքերը այնտեղ յարձակվում են, պրիստաւի աչքի առաջ, սպանելու նրանց, այնպէս որ նա հարկադրված է լինում 25 կօզակների հետ մի կերպ հեռացնել 2 հայերին Մալիբէկլուից։ Եւ Թուրքերը դարձեալ մնում են անպատիժ։ Պրիստաւի հեռանալուց յետոյ, Թուրքերը ձերբակալում են մի շուշիքենդեցի հայի։

—

Խանքենդ-աւան, մայիսի 7-ին

«Մշակ» լրագրի № 94-ում արձանագրեցի, որ Մալիբէկլուի Թուրքերը զինված, 100 հոգով, յարձակվել էին Խանին-բաղով անցնող հայ սայլապանների վրա, սպանել էին մէկին և կողոպտել նրանց իրերը։ Վիրաւորված է եղել դաշոյնով և մի հայ, Սևի անունով։ Այդ յարձակման և հրացանաձգութեան ժամանակ Խանին-բաղից դէպի Խանքենդին սպանված է գտնվել մի Թուրք, յայտնի չէ, թէ ում ձեռքով և ում գնդակով. հաւանական է համարվում, որ Թուրքերի գնդակով, որովհետև հայերի կողմից ոչ մի հրացանաձգութիւն չէ եղել, զէնք չեն ունեցել։

Մինչ հայերը սպասում էին արդար դատաստանի, անաչառ քննութեան, երևան կացուցանելու Մալիբէկլու Թուրքերի հայերի վրա յարձակվելու պատճառները, և թէ ովքեր են սպանել այն Թուրքին, ահա Թուրքերը մի բողոքով դիմում են ոստիկանութեան, նկարագրելով, որ իրանք ապրիլի 26-ին երեք ֆուրգօններ են բերում Խանքենդի «կոռ ու բեգարի» համար. վերադարձին, Խանքենդից ներքև, յարձակվում են իրանց վրա խանքենդցի կօշկակար Յակովը, Աթանաս Սողոմոնեանը և այլք, իրանց զէնքերը խլում և սպանում են մի Թուրք։ Այսպէս Թուրքերը վարագուրեցին իրանց յարձակումը հայ սայլապանների վրա։ Եւ ոստիկանութիւնը փոխանակ ստուգելու նրանց ասածը, նորից բռնեց 8 մարդ և բանտ նստացրեց, նրանց ընտանիքները թողնելով դառն չքաւորութեան մէջ։ Նախկին ձերբակալված 8 անձինքն էլ 3 ամիս բանտում նստելով, արձակվեցին, բայց հրաման ստացան հեռանալ Գանձակի նահանգից, մինչև պատերազմական դրութեան վերջը։

—

Այս րօպէիս լուր ստացանք, որ Շիկահողից Ճկտէն տանող ճանապարհին Թուրքերը յարձակվել են շիկահող'ցի չորս անզէն գիւղացիների վրա, սպանել են Բագրատ Բաբաեանցին և ծանր վիրաւորել են դաշոյնով վերջինի եղբօր Միքայէլին։ Թուրքերը ուզեցել են քշել ճկտէնցիների նախիրը, բայց ճկտէնցիք օգնութեան են հասել և յետ են մղել։ Հայերից երկուսը կարողանում են փախչել։ Տեսնենք ադմինիստրացիան ինչ միջոցներ է ձեռք առնում։ Բեխ հայ գիւղում Հաջի-բէգի սպանութեան պատճառով էկզեկուցիա են դրել 7 օրով և 100 ր. տուգանք են առել։ Դրութիւնը կարող է բարդանալ։ Հայերը, փոքր ինչ հանգստութիւն տիրելուց օրօրվում են հաշտութեան յոյսերով, բայց Թուրքը առիթը ձեռքից չէ տալիս։

—

Գանձակ, մայիսի 10-ին

Ամիրվարի այրումները կիրակի, ամսիս 7-ին, հինգերորդ անգամ յարձակում գործեցին Փիբ գիւղի «Մեծ Ղշլաղ» ձմեռանոցի վրա, հովիւներից խլեցին ոչխարի հօտը ու տարան հովիւ Օհաննէս Սիմէօնեան Երիցեանին։ Լուրը շուտով տարածվում է մօտակայ Աղուէսաշէն ձմեռանոցը, որտեղի հովիւները հետամուտ են լինում Թուրքերին, և նրանց աջողվում է ոչխարի հօտը յետ առնել։ Թուրքերը տեսնելով, որ հայերը հասնում են, սպանում են գերի վերցրած Օհաննէսին դաշոյնի 14 և գնդակի երկու վէրքեր հասցնելով։ Հայերը ճանաչել են Թուրքերից շատերին, որոնց մասին պատշաճաւոր «րապօրտ» տուին գաւառիս երկրորդ մասի պրիստաւին և բանաւոր էլ վաղը դիմելու են գաւառապետին ու նահանգապետին իրանց ցաւերի մասին տեղեկութիւն տալու։

Ամսիս 6-ին նոյն գիւղից ոչ այնքան հեռու «Աղուէսաշէն» կոչվող տեղից Թուրքերը տարել են մի գութան և երեք ձի. ձիերը Զօդվառի սահմաններով անցկացնելու ժամանակ, «Մարաքլուում» ձիերից մէկը յոգնած լինելով՝ թողնում են, իսկ երկու ձի տանում են։ Այսպիսի դէպքեր յաճախ կրկնվում են, այն էլ քոչի բարձրանալու ժամանակ, երբ բոլոր հայերը համոզված էին, թէ Թուրքերը գոնէ այդ ժամանակ կը դադարեցնեն իրանց աւազակային արշաւանքները։

Չենք ուզում հաւատալ, բայց փիբեցիք յամառ կերպով պնդում են, որ Ամիրվարի տանուտէրի գիտութեամբ, Դալի Ալին և միւս յայտնի աւազակները, իբր թէ, խմբվել են Ղարաղթափայ Թուրքաց գիւղը, ուր պէտք է շուտով այնտեղ գայ քրդական մի ուժեղ խումբ ու միացած ուժով պէտք է յարձակում գործեն Քարհատ և Փիբ գիւղերի վրա։ Գիւղացիք յամառ կերպով պնդում են իրանց ասածի վրա, մինչև անգամ վաղը այս մասին ուզում են գանգատվել իշխանութեան, բայց մենք այս լուրը յայտնում ենք վերապահութիւններով։

Իշխանութիւնը յարգելով մեր հարևան գերմանացիների խնդիրը՝ 200 բերդանի հրացան է տուել ինքնապաշտպանութեան համար։

Աւ. Սահակեան

—

Խանքենդուց.—Ամսիս 6-ին կայսերական ծննդեան տօնակատարութիւնը կատարելու ժամանակ ռուսաց եկեղեցու բակից սկսեցին որոտալ թնդանօթները։ Ժողովուրդը բանից տեղեկութիւն չունէր, և մեծ իրարանցման մէջ ընկաւ, կարծելով թէ Խանքենդեցոց տների վրա են արձակում։ Կանայք և երեխայք սկսեցին աղաղակ, վայնասուն բարձրացնելով փախուստ տալ։ Բայց յետոյ մարդիկ եկան և հանգստացրին, բանի էութիւնը հասկացնելով։ 21 անգամ արձակվեց թնդանօթ, այնպէս ուժգին, որ շարժվում էին տները, դռները և պատուհանները։

—

Քութայիս, 9 մայիսի։ Ընտրութիւնները խանգարելու նպատակով սօցիալ-յեղափոխականները քաղաքային վարչութեան շինութեան մօտ ցոյց արին։ Մնացած կուսակցութիւնների անդամներից մի քանիսը ոստիկանութեան աջակցութեամբ ցրեցին ցուցարարներին։ Ընտրութիւնները շարունակվում են։

(Հեռ. Գործ.)

—

Պետերբուրգ, 9 մայիսի։ Քայքայված առողջութեան պատճառով ներկայացրած խնդրագրի համաձայն կոմս Սօլսկին արձակվում է Պետական Խորհրդի նախագահի պաշտօնից։

(Հեռ. Գործ.)

—

Խրիստանիա, 10 մայիսի։ Այսօր վախճանվեց յայտնի դրամատուրգ Հենրիխ Իբսէնը։

(Հեռ. Գործ.)

—

Թուրք-պարսկական վէճի մասին մեզ հաղորդում են, որ Համիդիէ քիւրդերի եւևից արշաւել են Թիւրք կանոնաւոր զօրքերը և Սօմայի ու Մարկեավարի պարսից մաքսատան դրօշակները ջարդ ու փշուր անելով՝ տնկել են նրանց տեղ Թիւրքական դրօշակներ։

Միևնոյն ժամանակ զօրքերը հաստատվել են նոյն տեղերում, զանազան կէտերի վրա։

Պարսիկ կառավարութիւնը հրամայել է որ Ուրմիայում և այլ տեղերում գտնվող պահեստի զօրքերը հաւաքվեն Թաւրիզ և այնտեղից գունդ կազմելով վերադառնան Ուրմիա, կռւելու Թիւրք զօրքերի դէմ։

Դրութիւնը կրիտիկական է։

—

Դիլիջան, մայիսի 8-ին

Ներկայ թւի «Մշակի» 96 համարում տպագրված էր Լեմիցկու նոր կարգադրութիւնը, որով ի մէջի այլոց Դիլիջանից, Փոքր-Բիլիսայից և Ջարխէչ գիւղերից պահանջվում է 3900 րուբլի ղըղըլհաջլուեցի Թուրքերի օգտին... Նոր կարգադրութիւնը ցոյց է տալիս, որ, իբր թէ, անցեալ տարվայ նոյեմբերի 25-ին վերևի հայ գիւղերը կամ սպանել կամ գերել են ղըղըլհաջլուեցի 4 Թուրքի և 500 ոչխարներ։ Լաւ լսեցէք, նոյեմբերի 25-ին, այսինքն Ղազախի քաղաքի կործանումից 3 օր էլ առաջ, այն ինչ ցերեկվայ լոյսի պէս պարզ է, որ Ղազախի կործանումից առաջ եկաւ մեր՞ գաւառի թշուառութիւնը, յայտնի է թէ ում ձեռքով։ Այժմ հարց է առաջ գալիս թէ տարվայ այդ պահուն, այն էլ այդպիսի բացարիկ կարմիր տարվայ այդ պահուն, ինչ էին շինում յիշեալ հայ գիւղերի սահմաններում այդ Թուրքերը իրանց ոչխարներով, մինչդեռ սարից վերադառնալիս քոչի հետ հեռացան բոլոր հայ գիւղերից, բոլոր Թուրքերը, նոյն իսկ Դիլիջանի բազարում մի Թուրք նպարավաճառ էլ չը մնաց։ Բայց մեր ժամանակի պակաս կողմը հէնց այն էր, որ ով առաջ վազեց, գանգատվեց, նրա տարածն է, նրան հաւատում են, իսկ «անմեղ» մեղաւորի ձայնը չեն լսում, գոնէ մի անգամ հարցնէին պատասխանատու գիւղերին այս առիթով. ոչ, յանկարծ ստացվում է վճիռը և ժողովուրդը կայծակնահար է լինում, կորցնելով հաւատը արդարութեան մասին։

Արհուս

Պետերբուրգ, 8 մայիսի։ Պետական Դումայի նախագահը Պետական Դիւանատան միջոցով ներկայացրեց գահական ճառին պատասխանող ուղերձը ամենահպատակ մի կարճ զեկուցագրի հետ։ Սահմ.-ռամկավար կուսակցութեան օրէնսդրական մասնաժողովը վերջնականապէս ընդունել է—Դումա մտնելու համար—քառատիճան ձևակերպութեան վրա հիմնված ընդհանուր ընտրողական իրաւունքի վերաբերեալ օրինագիծը։ Մայիսի 10-ին մինիստրների խորհրդի նախագահը Պետերհօֆ է հրաւիրված՝ վերջնականապէս հաստատելու կառավարչական այն ծրագիրը, որը առաջին մինիստրը զեկուցանելու է Պետական Դումային, որպէս կայսրին ներկայացրած ուղերձի պատասխան։

—

ՔՈՒԹԱՅԻՍ, 11 մայիսի։ Քութայիսի բանտի կառավարիչ Կուլիկին, որ նոր էր ստանձնել իր պաշտօնը, բանտային սենեակից դուրս գալու րօպէին սպանված է բանտարկեալների մէկի ձեռքով։

ԹԻՖԼԻՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Թիֆլիսի ընտրութիւնների հետևանքը յայտնի է։ Յաղթութիւն տարան սօցեալ-դեմօկրատները։

Նրանք հանդէս եկան շատ մեծ բազմութեամբ և մի քանի քաղաքամասերում այնքան մեծ թւով քուէներ տուին, որ եթէ միւս բոլոր կուսակցութիւնների քուէները միասին հաւաքենք, դարձեալ չեն գերազանցի սօցիալ-դեմօկրատների քուէները։

Սօցիալ-դեմօկրատներից յետոյ քուէների մեծագոյն մասը ստացել են ժողովրդական ազատութեան կամ սահմանադիր-ռամկավարների կուսակիցները։ Եւ եթէ սօցիալ-դեմօկրատները, իրանց նախկին որոշման համաձայն, շարունակած լինէին իրանց բօյկօտը, այն ժամանակ անցած կը լինէին սահմանադիր-ռամկավարները։

Մենք այնուամենայնիւ շատ ուրախ ենք, որ սօցիալ-դեմօկրատները հրաժարվեցին անմիտ բօյկօտից և մասնակցեցին ընտրութիւններին։ Եւ նրանք չեն զղջում և չեն ափսոսում, որ մասնակցել են։

II

Մենք համակրութեամբ ենք վերաբերվում սօցիալ-դեմօկրատների աջողութեան, բայց մենք անշուշտ կը ցանկայինք, որ յաղթութիւն տարած լինէին ժողովրդական ազատութեան կուսակիցները։

Եւ ահա ինչու։

Սօցիալ-դեմօկրատների ձգտումների և պահանջների ամենամեծ կէտը բանուոր դասակարգի տնտեսական բարգաւաճումն է։

Դա ամեն կողմից համակրելի տենչանք է։ Բայց նա չէ ամփոփում այն բոլոր ցանկութիւնները, որ ունի պետութիւնը կամ ազգի ամբողջութիւնը։

Բացի բանուոր դասակարգից կան գիւղացիութիւն, արհեստաւորների մի շարք խմբեր, ազատ արուեստի և մտաւոր աշխատանքի ներկայացուցիչներ, կան քաղաքական, հասարակական և մտաւոր հոսանքների էական խնդիրներ, որոնք կամ չեն մտնում սօցիալ-դեմօկրատների ծրագրների մէջ և կամ կազմում են այդ ծրագրերի չափազանց երկրորդական և ստորադաս բաժինները։

Ճիշտ է Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատները այժմ աշխատում են ընդարձակել կուսակցական իրանց ծրագիրը, լրացնել նրան և ամփոփել աւելի մեծ բովանդակութիւն, բայց նրանց այդ ձգտումը դեռ չէ ձևակերպվել վերջնական և վճռական յօդուածներով։

III

Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը մտցրել է իր ծրագրի մէջ սօցիալ-դեմօկրատների ծրագրի այն մասը, որ ունի հերթական բնաւորութիւն և ուրեմն երկու կուսակցութիւններն էլ իրանց մերձաւոր քայլերի վերաբերութեամբ համակարծիք են։

Բայց ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը ամփոփել է իր ծրագրի մէջ և այն պահանջները, որ ունեն այն սօցիալիստական խմբերը, որոնք ամենամեծ հետաքրքրութիւնն են ցոյց տալիս դէպի գիւղացիութիւնը և հողային խնդիրները։

Եթէ ուշադրութեան առնենք և այն, որ ժողովրդական ազատութեան ծրագիրը պարունակում է քաղաքացիական, կրթական, իրաւաբանական խնդիրների վերաբերութեամբ մի շարք հիմնական պահանջներ, կը պարզվի, որ այդ կուսակցութեան համար սօցիալ-դեմօկրատների աջողութիւնը ճիշտ է նոյնպէս յաղթութիւն է և մեզ համար, իբրև ձախակողմեանի համար։ Բայց թերի յաղթութիւն է, որովհետև ընթացք է ստանում նրա պարլամենտական ծրագրի միայն մի մասը։

Իսկ մեր երկրի պահանջները աւելի ընդարձակ և բազմազան են։ Եւ այդ պահանջների արտայայտութիւնն էլ պէտք է լինի համապատասխան։

IV

Ի պատիւ մեր վրացի հարեւանների պէտք է արձանագրենք, որ նրանք ամենաեռանդուն կերպով մասնակցեցին ընտրութիւններին և առաւելապէս եռանդուն գործունէութիւն ցոյց տուին սօցիալ-դեմօկրատների շարքերում։ Նրանց մի ուրիշ, աւելի փոքր մասը մասնակցեց այն տարօրինակ բլօկին, որ նպատակ էր դրել միացնելու վրացի դեմօկրատներին, արմատականներին և ֆեդերալիստներին։ Այնուհետև քիչ քանակութեամբ վրացիներ կային ժողովրդական ազատութեան կուսակցութեան մէջ։

Հայերը, ընդհանրապէս, վերաբերվեցին գործին անտարբեր և թոյլ կերպով։ Հասարակական անտարբերութիւնը մի կողմից, հայ-թուրքական ընդհարումների ուրուականը միւս կողմից, քաղաքական տհասութիւնը երրորդ կողմից և քաղաքացիական արիութեան պակասութիւնը չորրորդ կողմից, մատնեցին հայերին անգործութեան, իսկ գործողներին ուժերի ջլատման։

Արդարև հասարակութեան մի քանի խմբեր ձեռնապահ մնացին ընտրութիւններից, հրատարակելով բոյկօտ Պետական Դումայի դէմ. մի քանի խմբեր ցանկանալով աջողեցնել Ս. Արղութեանի պատգամաւորական թեկնածութիւնը մտան մի անբնական բլօկի մէջ, այնուհետև քաղաքացիների մի շատ խոշոր թիւ իր անտարբերութեան շնորհիւ մնաց քաղաքային ուպրավայի ցուցակներից դուրս և անկարող եղաւ օգտվել իր ընտրողական իրաւունքից։

Եւ միայն հայերի այն վաճառական ստուար մասը, որ խմբվեց ժողովրդական ազատութեան կուսակցութեան մէջ, գիտակցօրէն վերաբերվելով գործին, կատարեց իր քաղաքացիական պարտաւորութիւնը։

Մենք չենք խօսում հայ սօցիալ-դեմօկրատների այն փոքրաթիւ խմբին, որ գովասանքի արժանի եռանդով գնաց մասնակցելու ընտրութիւններին։

Հայկական ընդհանուր անտարբերութեան և խակ հասկացողութիւնների տարափի մէջ շատ դժուար է այն գործողների դրութիւնը, որոնք համոզված էին թէ պէտք է մասնակցել ընտրութիւններին և առաջ մղել մեր երկրի կարիքներին և պահանջներին տեղեակ և հեղինակաւոր թեկնածուներ։

Դժուար էր, բայց դժուարութիւնը չը կանգնեցրեց գործողներին։

Ժողովրդական ազատութեան գործողները գործ դրին բոլոր իրանց միջոցները արթուն պահելու հասարակական փութակցութիւնը։

Նրանք իրանց պարտքը կատարեցին, իսկ եթէ հասարակական ծանր տրամադրութիւնը մի կողմից և հասարակական անտարբերութիւնը և քաղաքական տհասութիւնը միւս կողմից խոչընդոտ հանդիսացան, թող այդ հանգամանքը մի դաս լինի մեր հասարակութեան համար, որ առանց դասերի ոչինչ չէ կարողանում իրագործել իր կեանքի մէջ։

Մենք մեր պարտքը աշխատեցինք մեր կարողութեան չափ կատարել

Ա. Քալանթար

ՓՈԽԱՐՔԱՅԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏՆԵՐԻՆ

Մի քանի գեներալ-նահանգապետութիւնների վերաբերմամբ ես նկատել եմ, որ օրէնքով իրանց վերապահված գործողութիւնների կարգից շեղվում են ադմինիստրատիւ իշխանութիւնները, այդ պատճառով հարկաւոր եմ համարում ղեկավարվելու համար տալ հետևեալ ցուցմունքները։

Նահանգապետների, գեներալ-նահանգապետների և ժամանակաւոր գեներալ-նահանգապետների պարտականութիւնների և իրաւունքների գործունէութեան շրջանը ամենևին միատեսակ չեն։ Այս վերջիններին վերապահվում են բացառապէս միայն այն իրաւունքները ու պարտականութիւնները, որոնք յիշված են ընդհանուր նահանգապետների համար հաստատված 23 յօդուածի յաւելուածի մէջ։ Այդ օրինականացման խիստ որոշ շրջանակներում, միմիայն պետական կարգապահութիւնը և հասարակական խաղաղութիւնը պաշտպանելու համար պէտք է գործեն ժամանակաւոր գեներալ-նահանգապետները։

Մասնաւորապէս գեներալ-նահանգապետներին իրաւունքն է թողնվում, համաձայն II հատ. 23 յօդ. 19 յաւելուածում 1 յօդուած, պարտադիր որոշումներ հրատարակելը. այդ իրաւունքը չէ կարող բացատրվել ընդարձակ մտքով, այդ պատճառով պարտադիր որոշումները պէտք է վերաբերվեն միայն այն առարկաներին, որոնք պէտք է հասարակական կարգապահութեան և պետական ապահովութեան խանգարման առաջը առնեն, և չեն կարող ունենալ ուրիշ, օրինակ, առողջապահական, բարեշինութեան բնաւորութիւն։

Գեներալ - նահանգապետի հրատարակած պարտադիր որոշումները, տեղական օրէնքներ լինելով, պէտք է գործադրվեն միայն այնպիսի յանցանքների համար, որոնք որոշումների մէջ ուղղակի և պարզ կերպով նախատեսված են։

Տուգանքներ նշանակելը և կալանաւորելը, որպէս պարտադիր որոշումները խախտելու համար նշանակված պատժական օրէնքներ, կարելի է յանձնարարել միայն նահանգապետներին և նրանց համապատասխան անձանց։

Ցանկալի չեն թւում մի քանի տեղերում կատարված միջոցները, որ զինուորական դատարանի քննութեանն է յանձնվում այս կամ այն, նախորոշված, տեսակի գործերը։ Այդպիսի յանձնարարումը թէև օրէնքով թոյլատրելի է, բայց, յիշեալ յանցաւոր դէպքի հանգամանքները խնամքով քննելուց յետոյ, միայն գերադասելի է։ Նա յայտնի չափով նախազգուշացնում է այնպիսի ծայրահեղ, կենսական և իրաւաբանական տեսակէտի միջոցները, որպիսին է զինուորական դատաստանը, այնպիսի գործերի վերաբերմամբ, որոնք մօտիկ քննութիւնից յետոյ պարզվում են որ կարևոր էլ չեն։

Առևտրա - արդիւնաբերական հաստատութիւնների փակումը, կայքի գրաւումը ու կալանաւորումը, իբրև արտակարգ և քայքայիչ միջոց, հարկաւոր է գործադրել առանձին շրջահայեցողութեամբ։

Շրջահայեցողութիւնը՝ պահպանութեան կարգով կատարվող կալանաւորութիւնների համար, պէտք է լինի բնորոշ գիծը։ Այդ պահանջների կատարումը շատ յաճախ ենթադրում է տեղական պայմանների և ազգաբնակութեան հետ լիակատար նախնական ծանօթութիւն, այդ պատճառով առաջարկում եմ ժամանակաւոր գեներալ-նահանգապետներին տեղական մշտական պաշտօնեաների ծառայութիւնից ընդարձակ չափով օգտվել և չզատել տեղական ադմինիստրացիային, նմանապէս ընդհանուր և ժանդարմական ոստիկանութեանը կալանաւորելու և ազատ արձակելու մասին, հարցեր, որոնք ուղղակի վերաբերում են յիշեալ ադմինիստրացիայի և ոստիկանութեան կոմպետենցիային։

Իսկ ընդհանրապէս պահպանութեան կարգով կալանաւորելը պէտք է գործադրվի ոչ բոլոր քաղաքական յանցաւորների վերաբերմամբ, այլ միայն նրանց, որոնք, պէտք է ենթադրել, կաշխատեն խուսափել քննութիւնից և դատաստանից, կամ թէ նրանց, որոնց ազատ մնալը սպառնում է հասարակական և պետական ապահովութեանը։

Ինչ վերաբերում է ադմինիստրատիւ աքսորներին (23 յօդ. յաւել. 19 յօդ. 17 կ.) նա պէտք է գործադրել միայն այնպիսի անձանց վերաբերմամբ, որոնք պետական կարգապահութեան համար անկասկած վտանգաւոր են, և չէ կարելի տարածել այնպիսիների վրա, որոնք թէև անհանգիստ են, բայց որոնց ներկայութիւնը տեղական ազգաբնակութեան միջավայրում անմիջական սպառնալիք չէ ներկայացնում հասարակական ապահովութեան համար։ Առանձին անհատների ապրելը գեներալ-նահանգապետութեան սահմաններում արգելելու ժամանակ (23 յօդ. յաւել. 19 յօդ. 16 կ.) աքսորավայրի ընտրութիւնը աքսորականի կամ մի ուրիշի համար պէտք է վերապահել այս վերջինին, իսկ ճանապարհի վկայականներով առանց պատճառի հայրենիք աքսորելը, յաճախ շատ հեռաւոր, ցանկալի միջոց չէ և համեմատական մտքով վտանգաւոր նոյնիսկ։ Ինչ վերաբերում է պարբերական մամուլին, նրանց վերաբերմամբ ժամանակաւոր գեներալ նահանգապետներին վերապահում է միայն մի, բայց մեծ իրաւունք,—յիշեալ հրատարակութիւնները դադարեցնելու իրաւունք, իսկ որ և է ուրիշ ցենզուրական-պատժական և առհասարակ ցենզուրական լիազօրութիւններ կամ պարբերական մամուլի նոր հրատարակութիւններ լոյս ընծայելու թոյլատուութիւն տալու համար լիազօրութիւններ տալ գոյութիւն ունեցող օրէնքներով գեներալ-նահանգապետի իշխանութեանը՝ չէ տրված նոյնպէս իրաւունք թերթի խմբագիրներին դատաստանական պատասխանատուութեան ենթարկելու պաշտօնական անձանց, կառավարչական հաստատութիւններին, զինուորական մասերին և այլն զրպարտելու համար, որոնք իրանց անկախ կերպով պէտք է գործ սկսեն իրանց գործունէութեան վերաբերմամբ սուտ և զրպարտողական տեղեկութիւններ տարածելու համար։

Վերջապէս, զանազան տեսչութիւնների մէջ եղող չինովնիկների վերաբերմամբ (որոնք առաջին երրորդ կարգի պաշտօններն են վարում) նմանապէս և այն անձանց, որոնք ընտրութիւններով են ծառայում դասային և քաղաքային հաստատութիւնների մէջ, ժամանակաւոր գեներալ նահանգապետներին իրաւունք է տրվում հեռացնել նրանց, և միայն գործից հեռացնելը զինուորական դրութեան ամբողջ ժամանակ։ Այդպիսով պաշտօնից արձակելը, փոխադրել և պաշտօնների նշանակելը հարկաւոր է ընդունել գեներալ նահանգապետների իրաւասութեան, կոմպետենցիայից դուրս։

Վերոյիշեալ ցուցմունքները առաջարկելով գործադրութեան համար, ընդունում եմ, որ գեներալ-նահանգապետների գործունէութեան ճիշտ սահմանափակումը օրէնքի շրջանակներով, պէտք է պատճառ լինի գեներալ-նահանգապետի իշխանութեան հեղինակութեան զօրեղանալուն, նոյնպէս և ամենալաւ հետևանքների հասնելու պետական և հասարակական ապահովութեան պաշտպանութեան գործում։

Ստորագրեց. գեներալ-ադիւտանտ կոմս Վօրոնցով-Դաշկով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Առաջաձոր կամ Դովլանլու, 5 մայիսի։ Դեռ անցեալ ապրիլ ամսին լուրեր էին պտտում, որ մեր Խաչէնի հովիտը մեծ թւով կոզակներ են գալու, թէ ինչու համար՝ յայտնի չէր։ Յիշեալ ձորակի հայ գիւղացիք լսելով այդ՝ թագցրել էին իրանց սեփական քրտինքով վաստակածները հողի տակ և իրանց շրջապատող անտառներում ու ահ ու դողը սրտները ընկած՝ րոպէ առ րոպէ՝ սպասում էին լուրի ճշմարտվելուն, որպէս զի իրանք՝ բոլոր բնակիչները՝ կարողանային շուտ փախչելով մերձակայ անտառները՝ պատսպարվել ու այդպիսով ազատվել կոզակների ճիրանից։

Վերջապէս ապրիլ ամսի 25-ին յանկարծ յիշեալ հովտի Առաջաձոր (Դովլանլու) գիւղը մտան մօտ 120 կոզակներ՝ երկու օֆիցերի և տեղիս պրիստաւի տեղապահի հետ, որոնք տեղաւորվեցին սովորական կերպով յիշեալ գիւղում գտնվող կալուածատէր Մ. Դոլուխանեանցի հոյակապ տան սենեակներում, որտեղ գտնվում է և տեղիս գիւղական ուսումնարանը։ Թէ առաջաձորցիք և թէ յիշեալ ձորակում ապրող ուրիշ գիւղացիք՝ իմանալով կոզակների Առաջաձոր գալու մասին, իսկոյն փախուստի դիմեցին դէպի մերձակայ անտառները՝ թէ կին, թէ երեխայ, թէ տղամարդիկ և թէ այն էլ անճրկային ցեխ ու վատ եղանակին։ Գիւղերը մնացին համարեա դատարկ։ Պրիստաւի տեղապահը ու օֆիցերները, նկատելով, որ ժողովուրդը փախչում է իրանցից, հաւաքել տուին իրանց մօտ Առաջաձորում մնացած մի քանի անձանց ու այդ գիւղի տանուտէրի օգնականին և յայտնեցին նրանց, որ իրանք եկել են Խաչէնի ձորակը, ոչ թէ այդ ձորակի հայերին վնասելու դիտաւորութեամբ, այլ եկել են ձորակով չուող թուրքերին ուղեկցելու՝ անկարգութիւնների առաջն առնելու համար, եթէ միայն տեղի ունենան, աւելացնելով, որ հայերին մնում է վերադառնալ գիւղօրայքը ու չը փախչել, չը վախենալ իրանցից։ Օֆիցերներից մէկը ի միջի այլոց ասաց, որ իրանք կոզակների հետ մնալու են այդ հովտում՝ համաձայն Գանձակի գեներալ-նահանգապետի կարգադրութեան՝ չորս ամիս՝ տէրութեան հաշւով ու գիւղացիներին ոչ մի վնաս չեն տալու, աւելացնելով, որ շուտ իրանց համար «պրօվիանտ» է գալու արաբաներով, ուստի մինչև այդ «պրօվիանտի» հասնելը՝ օֆիցերն առաջարկեց ժողոված գիւղացիներին տալ իրանց՝ հաց, տաւար՝ մորթելու համար, խոտ ու գարի (ձիերի համար)՝ բոլորը փողով։

Փախուստ տուած ժողովուրդը իմանալով, թէ ինչ նպատակով են եկել կոզակները, օֆիցերների ու պրիստաւի տեղապահի հետ՝ ու հաւատալով այդ պաշտօնեաների ասածներին, սկսեցին իրանց տնային ապրանքներով վերադառնալ իրանց տները, հաւաքեցին հաց, գարի, խոտ և մի տաւարի հետ տուին կոզակներին, համաձայն նրանց արած առաջարկութեան։ Ով որ գարի չունէր, Կուսապատից կամ Մարդակերտից պարտքով գնած ցորենը ու կորեկն էր փոխում գարու հետ ու տալիս իր պարտքը։ Կոզակների գալուց յետոյ, երկու օր անցած՝ սայլերով Առաջաձոր եկաւ կոզակների «պրօվիանտը», բայց որովհետև այդ «պրօվիանտը» միայն մի քանի օր կարող էր բաւականութիւն տալ, ուստի օֆիցերներից մէկը (կոմանդիրը) առաջարկեց ժողովրդին՝ կապալով վերցնելու՝ կոզակների հացը, խոտը, գարին, միսը և այլն. հացի պուտը 1 ր. 80 կ., խոտինը 40 կ., գարու պուտը 1 ր. 20 կ. և մսինը 2 ր. 80 կ.։ Ճարվեց մի առաջաձորցի մարդ, որը կապալով յանձն առաւ պատրաստել հայ մատակարարելու։ Կոզակները ու օֆիցերները առ այժմ քաղաքավարի ու մարդասիրաբար են վերաբերվում ժողովրդին, նրանք (կոզակները) առանց իրաւունք խնդրելու չեն մտնում գիւղացու տունը և ոչ մի վնաս չեն տալիս բնակիչներին։ Միայն նրանց մի վարմունքը հաճելի չեղաւ, այն է, որ կոզակները՝ օֆիցերների ու պրիստաւի տեղապահի կարգադրութեամբ՝ առանց ուսուցչից հարցնելու ու իրաւունք խնդրելու վերոյիշեալ Դոլուխանեանցի տան ներքևի յարկում գտնվող ուսումնարանի նստարանները դուրս են հանել, պատկերները ու աշխարհագրութեան քարտէզները պոկոտել, դռները տեղիցը հանել ու նրանցից անկողնակալ շինել իրանց համար ու այդպիսով վարչական դպրոցի դասատունը «կազարմա» են դարձրել, իսկ նրա բակը կատարեալ «թովլա», ու դրանով խանգարել, դադարեցրել ուսումը։ Ուսուցիչը դիմել է օֆիցերին ասելով, թէ ինչու նրանք ուսումնարանի հետ այդպէս են վարվել ու դադարեցրել դասատուութիւնը և իմ իրաւունքով։ Օֆիցերներից մէկը պատասխանում է. գեներալ-նահանգապետի (Գանձակի) հրամանով, իսկ միւս օֆիցերն ասում է, որ իրանք ինչ մեղք ունին դրանում, քանի որ իրանց այդտեղ են իջեցրել և բացի այդ շինութիւնից ուրիշ յարմար տուն, տեղ չը կայ իրանց ապրելու համար։ Յիշեալ շինութեան ներքևի յարկում ապրում են կոզակները, վերևում սպաները, իսկ բակում տեղաւորված են կոզակների 100—120 ձիերը։

Կոզակների գալուց երկու օր անցած՝ եկաւ յիշեալ գիւղը Ջիւանշիրի նոր նշանակված գաւառապետ (Ջիւանշիրի նախկին գաւառապետը, որին անցեալ 1905 թ. աշնանը տեղափոխել էին Գանձակի գաւառի մի մասում—վարիչու հաշտարար միջնորդի պաշտօն) պ. Ֆլիգինսկին, որը մեր ձորակի բոլոր գիւղերի առաջնակարգ անձանց Առաջաձոր գիւղը ժողովեց ու յայտնեց նրանց, որ չուող (Խաչէնի ձորակով) թուրքերի հետ թշնամաբար չը վարվեն՝ անկարգութիւններ չը ծագեցնելու համար և ի միջի այլոց ասաց, որ եթէ չուողներից մի թուրք սպանվի հայ գիւղերի մօտ գտնվող ճանապարհներում, այն ժամանակ այդ գիւղերի վերջը պէտք է լինի....։

Յիշեալ գաւառապետը ասում է և այն, որ ամեն մի աւերված գիւղի ժողովուրդ պէտք է անպատճառ վերադառնայ իր նախկին բնակավայրերը, ծննդավայրերը՝ նորոգելու, կարգի բերելու ու այնտեղ ապրելու։ Հաւաքված ժողովուրդը, լսելով այդ՝ կարծիք է յայտնում, որ եթէ Սարխավենդի քօլանի թուրքերը վերադառնան իրանց գիւղում ապրելու, նրանք էլ ի հանգիստ չեն ապրելու և արիւնահեղ ընդհարումներ են առաջ բերելու, ինչպէս անցեալ տարւայ գարնանը, ամառն ու աշնանը նրանք տասնեակ անմեղ հայերի արիւն թափեցին, սպանեցին, մորթոտեցին ու անպատւեցին նրանց դիակները, որոնց մասին պաշտօնական կերպով յայտնված է իրան գաւառապետին։ Գաւառապետը ասում է, որ իրան հրամայված է ցրված գիւղացիներին իրանց նախկին գիւղերը գրկել ու այնտեղ բնակեցնել, ուստի և սարխավենդցիք պէտք է իրանց գիւղը վերադառնան...

Պ. գաւառապետի ասածների համաձայն, պէտք է սարովեցիք, ավախլանցիք ու այլ հայերը վերադառնան իրանց նախկին ծննդավայրերը՝ բնակավայրերը նորոգելու ու այնտեղ ապրելու. դրանք իմ կարծիքով, շատ բարդ հարցեր են և առանց երկար մտածելու դժուար է այդ մեծ ռիսկը անել։ Ներկայ պարագաներում դժուար է յոյս դնել բիւրօկրատիզմի ու թուրքերի վրա... Յիշեալ գաւառապետը վերադարձաւ Թարթառ աւանը՝ իր բնակարանը՝ առանց կարգադրութիւն անելու և Առաջաձորի ուսումնարանի վերաբերեալ, որը ինչպէս վերև նկարագրեցի դարձրել էին «կազարմա»... Աւելորդ չեմ համարում այստեղ յիշել այն, որ Ջիւանշիրի նախկին գաւառապետ պ. Բէկուսը իր յանձնված գաւառի գիւղօրայքը գալով՝ առաջ յաճախում էր ուսումնարանները, յետոյ դուրս գալով դպրոցից սկսում էր կարգադրութիւններ անել ուսումնարանի շինութեան համար, ուսուցիչների կացարանների վերաբերմամբ և այլն, և առհասարակ այդ օրինակելի գաւառապետը միշտ խնամք էր տանում ուսումնարանների վիճակի բարւոքման մասին։

Կոզակները շարունակում են ապրել Առաջաձորում օֆիցերների ու պրիստաւի տեղապահի հետ։ Չուող թուրքերից մինչև այսօր դեռ սար բարձրացող չէ եղել մեր ձորակով, չը նայած որ այդքան կոզակները չուողների համար են եկել Խաչէնի ձորակը, այդտեղ չորս ամիս ապրելու... Լուրեր են տարածվում թէ թուրքերը այս տարի սար չեն բարձրանալու՝ մտածելով ու վախենալով, որ կոզակները վրէժ կառնեն իրանցից՝ թուրքերի ձեռքով նորերս չորս կոզակներ կոտորելու առիթով և բացի այդ իբր թէ հայերից վախենալու պատճառով. թէ ինչքան ճիշտ են այդ լուրերը, չը գիտեմ։

Օֆիցերները կոզակներով շրջեցին Առաջաձորը շրջապատող անտառները՝ ասելով, որ հայերը թնդանօթ ունեն թագցրած՝ պէտք է գտնել նրան. սակայն յետ դարձան առանց ոչինչի։ **

ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ ԼԻԱԶՕՐՆԵՐԸ

Չորեքշաբթի մայիսի 10-ին, ինչպէս առաջուց յայտարարված էր, Թիֆլիսի բոլոր 10 քաղաքամասերում կայացան ընտրողների ժողովներ, Թիֆլիս քաղաքի կողմից 80 լիազօր ընտրելու համար, որոնք պէտք է ընտրեն Թիֆլիս քաղաքի կողմից մի անդամ Պետական Դումայի համար։

Հետևեալ կուսակցութիւնները ընտրական պայքար էին մղում. 1) սօցիալ-դեմօկրատները, որոնք յայտարարել էին, թէ իրանց թեկնածուն Պետական Դումայի անդամութեան համար Նօա Ժորդանին է, 2) «հայրենասէրների» կուսակցութիւնը, 3) արմատականների, ֆեդերալիստների և աւտօնօմիստների միացեալ խումբը (բլօկը) և 4) «Ժողովրդական ազատութեան» կամ սահմանադիր-ռամկավարական կուսակցութիւնը։

Չորեքշաբթի օրը տեղի ունեցաւ միայն ձայնատուութիւնը, իսկ հինգշաբթի, մայիսի 11-ին, ընտրական սափորները բացվելով, յայտնվեց քուէարկութեան արդիւնքը։ Բոլոր 10 քաղաքամասերում, բացի IV քաղաքամասից, ընտրվել են սօցիալ-դեմօկրատների առաջարկած թեկնածուները, այնպէս որ 80 լիազօրներից 71 հոգի ընտրվել են սօցիալ-դեմօկրատներից, իսկ միայն 9 հոգի (IV քաղաքամասի) ընտրվել են կադէտներից։

Այսպիսով սօցիալ-դեմօկրատների Պետական Դումայի անդամութեան համար առաջարկված թեկնածու Ժօրդանիի ընտրութիւնը ապահոված է։

IV քաղաքամասում կադէտների անցած թեկնածուներն են—պ. պ. Հ. Առաքելեան, Ք. Վէրմիշեան, Եսայի Դոլուխանեան, Կօզիւլկին, Ն. Կաճկաճեան, Ալեք. Մելիք-Ազարեան, Մալեանց, դօկտոր Թիչէր, Ա. Խատիսեան։ Այդ քաղաքամասում ընդամենը 689 հոգի են ձայն տուել (թէև ընտրողական ցուցակների մէջ 1500 հոգի ընտրողներ կան). և այդ 689 ձայներից ստացել են 1) կադէտները—332 ձայն, 2) սօցիալ-դեմօկրատները—254 ձայն, 3) բլօկը—59 ձայն, 4) «հայրենասէրները»—27 ձայն և 5) անիրական—17 ձայն։ Հետաքրքիր է, որ 1500 ընտրողներից մօտ 1000 հոգի հայեր են և սակայն հազիւ 300 հոգի դրանցից եկել են ձայն տալու, իսկ մօտ 700 հայ ընտրողներ անտարբեր են մնացել։

Առաջ ենք բերում ընտրութեան մանրամասն պատկերը։

Քաղաքամաս	սօց. դեմ.	ս. ռամկ.	բլօկ	հայրենաս.
I	1302	232	169	320
II	438	110	118	60
III	189	142	94	23
IV	254	332	59	27
V	443	335	30	16
VI	298	28	8	1
VII	1355	—	—	82
VIII	445	—	33	86
IX	1217	242	165	100
X	2352	134	160	92

Բացի այս 4 կուսակցութիւններից եղել են և երկու կուսակցութիւն. «տնտեսական դաշնակցութիւն» և «իսկական ռուս մարդկանց դաշնակցութիւն»։

VII քաղաքամասում «տնտեսական դաշնակցութիւնը» ստացել է 270 ձայն VIII-ում—37 ձայն, իսկ «իսկական ռուս մարդկանց դաշնակցութիւնը» եղել է միայն 10-րդ քաղաքամասում և ստացել է 213 ձայն։

Բոլոր ձայները եղել են 13,000։

ԵԱԿՕՎԼԵՎ

I

1905-ի սկիզբն էր...

Կոտորածի հինգերորդ օրը, Ռօժանու գիւղի հանդէպ հաւաքվել էր թուրքական մի հոծ բազմութիւն։ Խօսում էր մարգարէի յաջորդը, սպիտակ չալմայով, բաւականին նուրբ գծագրութեամբ, փառահեղ միրուքով մի ծերունի. Նրա հանդէպ՝ Կասպեան ընկերութեան պատկանող բակի մէջ, շարված էր անկողնում մէջ՝ սրախողխող արած մինչև 37 դիակ։ Այլանդակ կմախքները՝ սարսափից ծիծաղող ատամներով և արտայայտութեամբ իրանց վրա էին գրաւել նորեկների ուշադրութիւնը։ Երեկոյեան վերջալոյսի նման դեռ բարձրանում էր արեան թարմ գոլորշին, կը նշանակէ հէնց նոր էր վերջացել սոսկալի եղեռնը... Ահեղ բասով, սակայն դանդաղ, նա եզրափակեց իր ասելիքը թուրքական մի ասացուածքի մէջ ու իջաւ ամբիոնից։ Նրան յաջորդեց հայ կրօնաւորը խաչը ձեռին. հայեացքը պահ մի բևեռելով տանջված զոհերի վրա, նա հազիւ կարողացաւ արտասանել «Ժողովուրդ» խօսքը, և ապա արտասուքը խեղդեց նրան ու չը կարողացաւ շարունակել...

Այս անգամ խօսողը կրօնաւոր չէր, և ոչ էլ հասարակ մարդ. աջ ձեռքով շփելով գեղեցիկ ճակատը, ու բարկութիւնից դողացող ձայնով խաղալով միրուքի ծայրերի հետ, ձեռքը պարզելով դէպի զոհերը, նա շարունակեց. «Թուրքեր... Դուք գազաններ էք...» Նրա աչքերը այդ ժամին փայլում էին որպէս երկու զոյգ բոցավառ ջահեր, զգացած սպառութիւնից լեզուն հրաժարվում էր կատարել իր դերը, որից էլ առաջացել էր սրտի հետ միասին և ամբողջ մարմնի դողը, անհեղ ցնցումների տակ սարսափից կուրացած հայեացքով։ Նա մի քանի անգամ դիտեց իր շուրջը, և յանկարծ տեղից ցատկելով դէպի ձախ, բռնեց ոստիկանապետի օձիքից ու—Յուզմ... այս ինչ արեցիր... Իրարանցում ընկաւ կոզակների մէջ, շփոթվեց և ոստիկանապետը, սակայն անողոք էր ճշմարտութիւնը...

II

Հաշտութիւնից յետոյ է։

Նաւթային աշխարհում շարունակում է պտտվել հասարակաց կարծիքը. նշաններ կան, բայց չը տեսնում ենք ձևացնում. և ահա մի երկրորդ փոթորիկ—ընդհանուր գործադուլ է... Հայերս մի փոքր կաղեցինք, վախի պատճառը ուրիշ էր, մեզ բացարձակ սպառնում էին թուրքերով։ Եւ կարծես հէնց այսօր տեսնում եմ նոյն ծերունուն, կայարանի հանդէպ մի խումբ բանուորների մէջ. ալեծածան մօրուքով, գլուխը բաց՝ նա բարձրանում է նաւթոտ հողաթմբի վրա, և արտասանում հետևեալ բնորոշ տողը. «Մտէք և ձեր ընկերների դրութեան մէջ...» Շուացնողներ եղան, աղմուկ բարձրացաւ, պահանջեցին իջնել, իսկ նա անխռով շարունակեց մինչև վերջը և միայն ծայրահեղ դէպքում, երբ գործը լրջանում էր, իջաւ ամբիոնից ու կառք նստելով հեռացաւ...

Երրորդ գործողութիւնն է կովկասեան դրամայի, աւելի ցնցող տպաւորութեամբ. օգոստոսեան կատաստրոֆը շշմեցրել է ամենքին, մտքերը քարացել են... Շարժվել է և լէյբ-բուրժուազիան իր անողոք պահանջով. այդ միջավայրում, թէև արտօնեալ դասակարգը, պահանջներ է անում, սակայն դարձեալ պատերի յետևից թագնված. ոչ ոք, մինչև իսկ հայ կապիտալիստները ամենահասարակ քաջութիւն անգամ չեն զգում հրապարակի վրա գտնելու գոնէ իրանց «դատը»։ Բայց պատուական բամբասանքը իր դրական հետևանքը ունեցաւ. հրաւիրված էր քննելու իրերի դրութիւնը՝ և ըստ այնմ ստանալու մի խոշոր գումար գործը շարունակելու համար. նպատակը իրագործվում էր...

III

Ժամի երեք և կէսն է...

Մայրաքաղաքի պալատներից մէկում, կանաչ սեղանի շուրջը, բազմած են նաւթային աշխարհի հաստափոր ներկայացուցիչները։ Մի քանի րոպէ ևս, և մինիստր նախագահը նիստը բաց յայտարարեց. սկսվեց կարծիքների մի տափակ փոխանակութիւն. խոհեմութիւնը՝ որ յաճախ յանգում է քծնողութեան, թագաւորում էր այդ օր. լսվում էր պրեմիերի ուժեղ և տիրող ձայնը էլէքտրական զանգակի հետ...

Ապա երբ հարցը վերաբերում էր «մի յայտնի ազգութեան», և որի համար դատապարտելի լռութիւն էին պահում հայ ներկայացուցիչները, գետին քսելով մի տանջված ժողովրդի դատ, ու իրանց դերքով՝ աշխատելով և՛ դաւաճան հաշւելու նրան, այդ ժամանակ միայն ձայն խնդրեց մէկը այն պատգամաւորներից, որոնց սրտում ճշմարտութեան երկունքն է թագաւորում այդ ժամին, և հպարտ տոնով ջրելով ճաղատ պատգամաւորի կարծիքը «աւազակ երկրագործների» վերաբերեալ, բոլորովին հանգիստ կերպով դրեց և Բալախանիի հինգ գիւղերի տեղափոխման հարցը...

Սարսափ ազդեց աջակողմեան երկու պատգամաւորներին, անսպասելի լուրը մահաչափ ազդեց նրանց վրա, նրանք իրարով անցան։ Վստահ հայ բուրժուայի վախկոտութեամբ, որ նրանք քաջութիւն չեն ունենայ արծարծելու այդ հարցը, նրանք յանձն էին առել մի բան—մեղադրել այդ խնդրում նոյնքան հայերին, որքան և թուրքերին... Բայց ո՞վ էր այս մէկը, խիզախ որպէս հուժկու ալիքը, վճռական՝ որպէս մարտի զինուորը. և ռուս քաղաքային անսահման համարձակութեամբ պատասխանեց իր բոլոր պատճառաբանողներին։ Հայերի մէջ փսփսոց ընկաւ—միայն սրան ուղարկէինք՝ բաւական էր. իսկ նախագահը, երրորդ անգամ հրաւիրելով ծեր հռետորի ուշադրութիւնը այն բանի վրա—թէ մի մոռացէք, որ որտեղ էք գտնվում... այդ հարցը լուծված համարեց անորոշութեամբ, յօգուտ թուրքերի։ Նիստը դարձեալ շարունակեց իր զբաղմունքները, քննելով այլ և այլ հարցեր. աջակողմեան պատգամաւորներից մէկը, նիհար, ծաղկատար և ինտելիգենտ դէմքով բոլորովին դուրս էր եկել իր շալկից. յաղթութիւնը թէև իրանց կողմն էր, բայց ինչպէս երևում է նա դրանով գոհ չէր. աչքի տակով միշտ խէթ նայելով դէմ ու դէմ նստածին, նա շարունակում էր կրծոտել շրթունքները, և միաժամանակ մտմտալ մի ինչ որ բան։ Ինչպէ՞ս կուզէր այդ ժամին նա ամենակարող լինել, գոնէ մէկի համար... Առաջին փորձը անցաւ, գալիս էր և երկրորդը, ընդունվից բանուորների պատգամաւորութիւնը. եթէ այս էլ աջող անցնէր...

IV

Տարօրինակ հասկացողութիւն ունենք հայերս, ընտրութեան գործի վերաբերեալ. բանուորների մէջ կար և մի հայ պատգամաւոր, բայց ո՞վ էր նա, և ո՞վ էր ընտրել,—ոչ ոքին յայտնի չէ. ոչխարային անմտութեամբ օժտված մի թութակ, որ եկել էր պաշտպանելու Բագուի նահանգի հայ բանուորների դատը... Զարմանքը ապշութեան կը փոխվի այն ժամանակ, երբ այս դէպքում երևակայէք երկու ֆանատիկոս մտածողների մշտափոխ դերերը... Նրանք իրանց «մեծութեամբ», դարձեալ քաշվում էին այդ «հայ»՝ թէև ոչխար պատգամաւորից. ու նրանցից մէկը ի նկատի ունենալով նախորդ նիստերը, մի կողմ քաշելով նրան՝ գոռող դիրքին յատուկ տոնով հարցրեց։

—Հայի տղայ, ո՞րտեղից ես եկել։

—Բագուից։

—Ընտրվա՞ծ ես։

—Այո։

—Ո՞րտեղ ես բանում։

—N-ում։

Ապա ոտից գլուխ չափելով նրան խէթ հայեացքով.

—Քեզ մի քիչ լաւ չես պահում...

—Ի՞նչպէս։

—Պէտք է վերադառնաս։

—Ի հարկէ։

—Ապա խմբ՛ճ ես...

Ասաց նա ծանր, և ապա մարող ձայնով. բանուորը մատը կծեց...

Նոյն երեկոյեան, մի հեռագիր շարադրեց մտահոգ փիլիսոփան, հետևեալ բովանդակութեամբ.

—Բ... քաղաք. լէյբ գվարդիայի շէֆին։

Գործերը վատ են գնում, եթէ այսպէս շարունակվի։

Բարօն Նուրի...»

V

Նախընտրական պայքարն է, Դումայի ընտրութիւնների համար գնում են թեկնածուների անունները. և դարձեալ նա, այն ապաւորիչ «հրէշը» ալեծածան մօրուքով... Վճռական քայլն է, այլ ևս ոչ մի յոյս չը կայ, եթէ այդ ստանային աջողվի գնալ Դումա, և մի փակ կառք, կէս գիշերին, սըրընթաց դիմեց դէպի քաղաքի կենտրոնում մի գեղեցիկ ապարանք... Այլայլված ու յոգնած՝ հազիւ զսպելով իրանց, նրանք համարեա երկուսն էլ միաժամանակ ներս ընկան։

—Ուրախալի ոչինչ չը կայ։

—Ընտրվե՞ց։

—Անպայման...

Տիրեց լռութիւն։

VI

Գիշերվայ ժամի տասն և մէկն է...

Նաւթային բուրգերի միջից անցնում է
շացած կառք. երկու ուժեղ ձիաներ,
չափ ու դանդաղ քայլերով քաշում են
կտրելով կայարանի խաչաձև փողոցը, կա
ծովեց նաւթային վիշկաներից դուրս,
անծանօթի համար անբնակ անորոշութիւն
Հազիւ մի քանի քայլ, և ահա սուլեց դա
ճան գնդակը... Ձիերը խրտնեցին, մի փ
իրարանցում ընկաւ. ապա մի ձայն՝ մօ
գնդակի նման ընդգրկվեց փողոցի լռութ
մէջ, շան հաջոցի նման պահ մի հեծկլ
«ա՜ ու...», և մի դիակ ընկաւ փողոցի մայ
վրա։

—Դա մեռնող խղճի ձայնն էր Եակօվլև
հոգու մէջ...

Ա. Ջանեան

Բալախանի

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՒՆ

Երբ հեռագիրը լուր բերեց, թէ Պետակ
Դումայի նախագահ է ընտրվել միաձայն
թեամբ Մուրոմցեվը, անշուշտ, ամբողջ հա
րակութիւնը հետաքրքրվեց իմանալու թէ
է դա և ինչ անցեալ է ունեցել։ Բոլոր լր
գրները չուշացան ընթերցողներին ծա
թացնել Ռուսաստանի առաջին պարլամենտ
առաջին նախագահի կենսագրութեան հե
որով ի հարկէ, և բաւարարութիւն տուեց
հասարակութեան հետաքրքրութեանը։ Ս. Ա
Մուրոմցեվի կենսագրութիւնը տպագրվեց
«Մշակի» անցեալ համարներից մէկում։ Այժ
մայրաքաղաքի լրագրները մի նոր և շատ բ
նորոշ դէպք են հաղորդում Դումայի նախա
գահի կեանքից, որ արժէ «Մշակի» ընթեր
ցողներին էլ ծանօթացնել։

Անշուշտ յիշում են ընթերցողները, ո
1899 թ. ամառը ամբողջ Ռուսաստանը բա
նաստեղծ Պուշկինի ծննդեան հարիւրամեակ
էր տօնում։ Բռնապետական բռնի այդ ա
մենակատաղի ժամանակներում, երբ չորս
կողմ կատարեալ խաւար և ամայութիւն
տիրում, երբ ամբողջ երկիրը տնքում էր բի
րօկրատիայի վամպիրային ճիրանների մէջ
ժողովուրդը Զաքարիայի պապանձմանն է
դատապարտված, մամուլը ցենզուրայի ամենա
պինդ շղթաներով էր կապկապված, իսկ հա
սարակական գործիչների բերաններին մի մ
մեծ փականք դրված, մի խօսքով երբ շուրջ
վախ, սարսափ և կատարեալ մեռելութիւն էր
տիրում, Պուշկինի ծննդեան հարիւրամեակ
տօնելու թոյլատուութիւնը կառավարութեան
կողմից մի շատ լուսամիտ և խրախուսիչ քայ
համարվեց։ Չէ՞ որ Ռուսաստանի առաջին և ա
մենահնչակաւոր բանաստեղծ Պուշկինը, ինչ
պէս և միւս բոլոր Ռուսաստանի լուսամ
ատող համարվող գրական ու հասարակակա
գործիչները իր կենդանութեան ժամանակ ա
բողջ կեանքում հալածվել էր բռնապետութեա
կողմից, կը նշանակէ՝ նրա յոբելեանը տօնե
լու թոյլատուութիւնը կարելի էր այնպէս հասկ
նալ, որ կառավարութիւնն էլ գնահատում
Պուշկինի գործունէութիւնը և այժմ զղջում
որ անցեալում նրան այնչափ հալածել են։

Այդ տօնը մի առանձին ոգևորութիւն ա
առաջացրեց ամեն տեղ. ամբողջ երկրում
մի անկիւն չը մնաց, ուր չը տօնվէր նա։ Դ
մութ-խաւարի մէջ երևացող մի աղօտ լո
էր, դէպի ուր շտապեցին բոլոր թիթեռնի
ները։ Ամենքն էլ աշխատում էին լաւ օգտվ
այդ հազուագիւտ և յարմար րոպէից, ցանկա
նում էին գոնէ մի քանի ժամով դէն նետ
իրանց լեզուի ժանգոտած փականքները
հնարաւոր եղած սահմաններում դուրս թ
փել իրանց սրտի տակ կուտակված մաղձ
Շատ դառն ճշմարտութիւններ խօսվեցին ա
ժամանակ, շատ մաղձ թափվեց, բայց և շա
տերը զոհ գնացին այդ նենգամիտ պրովոկ
ցիային։

Ահա, հէնց այդ զոհերից մէկն էր Մոսկվա
յի Իրաւաբանական Ընկերութիւնը, որի նա
խագահն էր այն ժամանակ Ս. Ա. Մուրոմ
ցեվը։

Պուշկինի ծննդեան հարիւրամեակի տօնի
Մոսկվայի Իրաւաբանական Ընկերութեան
կողմից մի շատ հրաշալի ճառ արտասանե
Մուրոմցեվը և այդ ճառի համար կառավարու
թիւնը փակեց բոլորովին այդ ընկերութիւնը
որը Ռուսաստանի Իրաւաբանական Ընկերու
թիւններից ամենահինն էր համարվում։ Նո
օրը և նոյն տեղում մի շատ ոգևորիչ և կ
ճառ արտասանեց և Եակուշկինը, որին կ
ռավարութիւնը այդ ճառի համար աքսորեց
որը մի քանի ամսից յետոյ միայն թոյլտու
թիւն ստացաւ նորից Մոսկվա վերադառնա
Այժմ այդ նոյն Եակուշկինը Պետական Դու
մայի անդամն է և նրա ականաւոր հռետո
ներից մէկն է, իսկ Մուրոմցեվն էլ, ինչպ
արդէն գիտենք, Դումայի նախագահն է, ո
ընտրվեց միաձայն։

Սակայն պատկերը լրիւ դարձնելու համար
անհրաժեշտ է այստեղ ասել, որ 1899 թւա
կանին, Պուշկինի յոբելեանի ժամանակ
Ռուսաստանի ներքին գործերի մինիստր
որը յոբելեանական պրովոկացիան կազմեց
մի քանի հարիւր մարդ ձերբակալեց, բա
տերում ու աքսորավայրերում փակեց, այսօր
վան մինիստրական խորհրդի նախագահ Գո
րեմիկինն էր...

Լաւ պատկեր է, չէ՞. նախագահական ա
թոռի վրա բազմած է Մուրոմցեվը, հռետո
րական ամբիոնի վրա կանգնած է Եակուշկի
նը՝ իսկ նրանցից ոչ հեռու, մինիստրների
նստարանի վրա նստած է երեկվայ ինկվիզի
խան ու լիազօր դահիճ, իսկ այսօրվայ պա
տասխանատու առաջին մինիստր Գորեմի
կինը...

Ո՞րպիսի զուգադիպութիւն։ Բ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Գաւառապետ Բէկուսի գործը)

Գանձակ, 10 մայիսի

Ամսիս 5-ին Գանձակի նահանգական դա
տարանի դահլիճում Թիֆլիսի դատաստանա
կան պալատի ժամանակաւոր բաժանմունքը
քննեց Գանձակի նախկին գաւառապետ

Բէուտի գործը։ Բէուտը մեղադրվում է նրանում, որ 1904 թ-ին երկու Թուրքերի է ծեծել։

Մեղադրական ակտի բովանդակութիւնը մօտաւորապէս հետեւեալն է։

1904 թւի փետրվար ամսին, Կուրի ափում, Թուրք Ղարամուսալի գիւղի շրջանում անհետանում են երեք ռուս ստրաժնիկներ։ Գաւառապետ Բէուտը՝ ստրաժնիկներին որոնելու համար գնում է Ղարամուսալու գիւղը, որը պատկանում է Ջիատխանովներին։

Դեռ գաւառապետը գիւղը չը հասած, գիւղից ոչ այնքան հեռու նկատում է ահագին հրդեհի ծուխ ու բոցեր։ Գաւառապետը հրամայում է երեք ստրաժնիկներին գնալ հրդեհի վայրը և մի տեղեկութիւն բերել, և եթէ այնտեղ Թուրքեր լինեն՝ հրաւիրելու իրանց մօտ։ Երբ ստրաժնիկները հասնում են հրդեհի վայրը, նկատում են, որ Թուրքերը մի արխ են փորել ու մացառներ ու փշեր կտրել ու կրակել։ Ստրաժնիկները պահանջում են գիւղացիներին, որ իրանց հետ գնան գաւառապետի մօտ։ Թուրքերը չեն ուզում կատարել գաւառապետի հրամանը։ Ստրաժնիկներից մէկը մտրակով խփում է Թուրքին։ վերջինս էլ իր հերթին բահով հարուածում է ստրաժնիկին։ Ստրաժնիկները նկատելով այդ՝ յարձակվում են Թուրքերի վրա, ծեծում ու նրանց ուժով քշում գաւառապետի մօտ։ Վերջինս իբր թէ, հրամայում է Թուրքերին գետին տապալել ու ջարդել։ Ծեծված Բեյբալայ Բաբախանին և Մաշադի Իսմայիլին հրամայում է իր հետ տանել Սամուղ Թուրքաց գիւղը և այնտեղից ստով Ջիատլու գիւղը, որտեղից նրանց աջողվում է ծածուկ փախչել և ազատվել ստրաժնիկների բռնութիւններից։

Հրաւիրված 14 վկաներից, բացի Իւան Ախունովից, մնացեալ 13-ը Թուրքեր էին, որոնք չը նայած որ Բէուտի հակառակորդ խաները ու բէկերը շատ մեծ խնամքով նախապատրաստել էին, անվերջ հակասութիւնների մէջ ընկան. բոլոր Թուրք վկաները իրանց ցուցմունքներով աւելի էին մեղադրում գաւառապետին, քան նախնական քննութեան ժամանակ տուած ցուցմունքներով։ Թուրք բէկերը և խաները, որոնք մեծ խնամքով պատրաստել էին վկաներին, դատարանում էլ վայելչութեան սահմանից դուրս էին գալիս. նրանցից Մահմեդ Ջիատխանովը և ուսանող Ռաֆիբէկովը յաճախ մտնում են վկաների սենեակը և զեկուցում տալիս նախորդ վկաների տուած ցուցմունքների մասին։

Գաւառապետ Բէուտը նկատելով այդ վարմունքը, դատարանի ուշադրութիւնը հրաւիրեց ուսանող Ռաֆիբէկովի և Ջիատխանովի ապօրինի վարմունքի վրա։ Դատաւորները համարելով Բէուտի յայտարարութիւնը արդարացի, հրամայեցին, որ կողմնակի մարդիկ չը մտնեն վկաների սենեակը։

Վկաներից, ծեծվածներից երկուսը թէ ինչ տեսակ հակասական ցուցմունքներ էին տալիս, երեւում է հետեւեալից։ Նրանցից Բաբախանը պնդում էր, որ Սամուղում պահել են իրանց 11 օր, իսկ միւսը ասում էր՝ 3—4 օր։ Վկաներից մի քանիսը ցուցմունք էին տալիս, որ գիւղացիներին Թակել են գիւղից դուրս 2 վերստի վրա մի անգամ, միւսները պնդում էին, որ Թակվել են երկու անգամ. մի անգամ գիւղումը, մի անգամ գիւղից դուրս։ Վկաներից ոմանք ասում էին իրանց ցուցմունքի մէջ, թէ ծեծվածներին ձիով են գիւղ հասցրել, իսկ ոմանք վկայում էին թէ երկու երկու մարդով են նրանց գիւղ բերել։

Նախագահը դիմում է Բէուտին և հարց է տալիս թէ ինչն է դրդել Թուրքերին ձեր դէմ դատ բանալու։

Բէուտ ասեց մօտաւորապէս հետեւեալը։

Ես 9 երկար տարիներ պաշտօնավարութեանս ժամանակ, հակառակ իմ նախորդների սովորութեան, միշտ խուսափել եմ որ և է յարաբերութիւն ունենալու Թուրք բէգերի, խաների ու աղալարների հետ, որոնք, իմ համոզմամբ, մշտական չարիք են եղել Թուրք ժողովրդի գլխին։

Ես իմ պաշտօնավարութեան ժամանակ բէկերի և աղալարների միջնորդութիւնները ոչ մի դէպքում չեմ ընդունած և ես աշխատել եմ ժողովրդի մէջ Թուլացնել դրանց ազդեցութիւնը, որպէս զի հնարաւորութիւն գտնեմ դրանց դրդմամբ գործած յանցանքների թիւը պակասեցնել։

Պարզ է, որ այդ բանը դուր չէր գալու այն հեղինակաւոր բէգերին և աղալարներին ու խաներին, որոնք գաւառապետներից շատերի օրով մեծ ազդեցութիւն են ունեցել նրանց վրա։

Իմ վարմունքը տարօրինակ էր Թւում այդ պարոններին և նրանք մտածեցին գոնէ դրանով ինձ պաշտօնազուրկ անել։ Բազմաթիւ սպառնալիքներ եմ ստացել ինձ սպանելու համար և ես չը նայած որ պաշտօնապէս հաշւում եմ Գանձակի գաւառապետ, բայց իմ խնդրքով ինձ նշանակել են Ղազախի ժամանակաւոր գաւառապետի պաշտօնակատար, որպէս զի ժամանակաւոր ազատված լինեմ Թուրք հեղինակաւորների հալածանքներից։

Գաւառապետի բացատրութիւնը լսելուց յետոյ, դատարանը մօտ երեք քառորդ ժամ խորհրդակցելով հետեւեալ վճիռն արձակեց։

Ի նկատի ունենալով ծեծի մասին բժշկի տուած վկայականը և ի նկատի ունենալով, որ ծեծի վայրը այնքան մօտ է եղել, որ պ. Բէուտը կարող էր նկատել և արգելել, դատարանը մեղաւոր ճանաչելով Բէուտին անտարբերութեան մէջ, դատապարտեց նրան մի ամսվայ զինուորական բանտարկութեան։

Աւ. Սահակեանց

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՐՐԻՏՕՐԻԱԼ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

> «Ընդունելով Կովկասեան իւրաքանչիւր ազգութեան համար ազգային տերրիտօրիալ ինքնավարութեան իրաւունք, Կովկասեան իրաւաբանական ընկերութիւնը ցանկալի և իրագործելի է համարում ներկայումս Վրաստանի ազգային տերրիտօրիալ ինքնավարութիւնը»։

Ինչպէս հաղորդված էր «Մշակ»-ի №93-ում, Կովկասեան Իրաւաբանական Ընկերութեան վերջին նիստում, ընկերութեան անդամ պ. Ծովեանեանի առաջարկած այդ բանաձևն է ընդունվել Վրաստանի ինքնավարութեան հարցի վերաբերմամբ։

Կովկասեան Իրաւաբանական Ընկերութիւնն առաջինն է, որ պաշտօնապէս իր որոշ ու դրական կարծիքն է յայտնում Վրաստանի աւտօնոմիայի խնդրի մասին։ Անկասկած վերոյիշեալ փորմուլան պատահաբար ու վայրիվերոյ չէ կազմվել և նա արդիւնք է, վերջին ժամանակներս շարունակ ծեծվող, այդ դժուար, բարդ խնդրի խորին և բազմակողմանի ուսումնասիրութեան։

Ցանկալի համարելով մամուլի մէջ պարզված տեսնել այն մօտիւները, որոնց հիման վրա վերոյիշեալ ընկերութիւնը եկել է այդ մեր կարծիքով, ազատամիտ, համակրելի ու արդար եզրակացութեան, մենք սրանով ուզում ենք շօշափել այդ խնդրի հետ սերտ կապ ունեցող մի այլ հարց։

Յայտնի է, որ աւտօնոմիայի խնդրի վերաբերմամբ հայերի ու վրաց կարծիքները բաւականին տարբերվում են միմեանցից։ Մինչդեռ վրացիք, ի նկատի ունենալով իրանց խիտ խմբված դրութիւնն իրանց հայրենիքում և այլ հանգամանքներ, պահանջում են Վրաստանի ազգային տերրիտօրիալ ինքնավարութիւն, հայերն, ընդհակառակն, շնորհիւ իրանց ցրված լինելու դժբաղդութեան, գուցէ և մի քանի այլ կշռադատութիւնների հիման վրա, այդպիսի տերրիտօրիալ, ազգային ինքնավարութեան հարց առաջ չեն քաշել, այլ դրել են ընդհանուր համանդրկովկասեան ինքնավարութեան խնդիր (զեմստվոյին ժողով) *)։

Այստեղ առաջ են գալիս երկու բաղդակից հարեւան ազգերի ձգտումների համարեա հակադիր հոսանքներ. վրացիք ուզում են առանձնանալ իրանց հայրենիքում, համարեա կտրվել անդրկովկասեան մեծ ընտանիքից և ներքին բոլորովին անկախ կեանք վարել, իսկ հայերն, ընդհակառակն, աշխատում են աւելի սերտ կապել իրանց հետ իրանց դարևոր ամենամօտ հարեւաններին—վրացիներին, ռուսներին, Թուրքերին և նրանց հետ միասին ձեռք ձեռքի տուած կազմել մի խառն, միաձոյլ համանդրկովկասեան ինքնավարութիւն։

Մի կողմ թողնելով այն հարցը ևս, թէ այդ երկու ձգտումներից որն է աւելի օգտակար ամբողջ երկրի—Անդրկովկասի և նրա բոլոր ազգերի օգտի տեսակէտից, որոնցից ամեն մէկն ունի և իր վիճելի կողմերը, սրանով ուզում ենք քննել մի հարց, թէ որքան ցանկալի է միեւնոյն երկրում ունենալ երկու տեսակ ինքնավարական ձեւ։ Եթէ մի գեղեցիկ օր իրագործվի վրացիների պահանջը և զուտ Վրաստանին տրվի աւտօնոմիա ազգային տերրիտօրիալ ձեւով և միեւնոյն ժամանակ Անդրկովկասի հարաւ-արեւելեան հայ-Թուրքական նահանգներն էլ, ըստ հայերի ցանկութեան, կազմեն մի առանձին խառն ինքնավար երկիր, այդպիսով առաջ կը գան Անդրկովկասում երկու տեսակի կառավարութիւններ—զուտ վրացական և խառն հայ-Թուրքական—իրանց տարբեր օրէնքներով, ձգտումներով ու աշխարհայեցողութեամբ և այդ երկու իսկապէս իրարից անջատված երկրների մէջ անվերջ պէտք է լինեն անտագօնիզմը, Թիւրիմացութիւններն ու ընդհարումները։ (Թէև այն էլ դեռ հարց է, թէ կարելի՞ է արդեօք մի տուրակում—հայ-Թուրքական կառավարութեան մէջ—տեղաւորել միմեանց հետ խառն հային ու Թուրքին այնպէս, որ նրանց մէջ առաջ չը գար մրցում, դժգոհութիւն և վերջ ի վերջոյ անջատման խնդիր)։

Անհրաժեշտ է միաժամանակ միատեսակ աւտօնոմիական ձեւ մտցնել ամբողջ Անդրկովկասում և եթէ հայերի պահանջած համանդրկովկասեան ինքնավարութիւնն իր յատուկ պարլամենտով անիրագործելի կը լինի, եթէ Վրաստանի ազգային տերրիտօրիալ, ինքնավարութիւնն աւելի ցանկալի եւ իրագործելի կը համարվի, այն ժամանակ միայն ելքը կը մնայ միւս ազգութիւնների համար ևս ստեղծել նոյնանման ազգային տերրիտօրիալ ինքնավարութիւններ։

Եթէ Կովկ. Իրաւ. Ընկերութիւնը գտել է, որ ցանկալի ու իրագործելի է այդպիսի ինքնավարութիւն տալ Վրաստանին, որտեղ գուցէ ամեն երկրից ոչ պակաս են այլացեղ ու բազմալեզու տարրերը, նոյնն անշուշտ կարելի է պնդել և Անդրկովկասի միւս տեղերի ինչպէս և հայկական գաւառների վերաբերմամբ։ Անհնարին չէ կարող լինել և ոչ էլ վտանգաւոր, եթէ մի շրջանի մէջ ամփոփեն Երեւանեան նահանգն ու Կարսի շրջանը, հիւսիս արեւելքից դրանց կպած Ախալքալաքի, Բորչալուի, Ղազախի, Գանձակի, Շուշիի և Զանգեզուրի 6 գաւառներով միասին և կազմեն մի հայկական տերրիտօրիա տալով նրան ազգային ներքին աւտօնոմիա, Վրաստանին համահաւասար իրաւունքներով, մի ծրագրով։ Նոյնը կարելի է ասել և Թուրքաշատ այն գաւառների վերաբերմամբ, որոնք բռնում են Բագւի նահանգը և Գանձակի նահանգի հիւսիսարեւելեան մասը։ (Յետոյ կարելի է հայկական ու Թուրքական նահանգներում կատարել մասնաւոր բաժանումներ ու հողափոխութիւններ հայերի և Թուրքերի մէջ)։

Ներքին աւտօնոմիայի խնդիրն Անդրկովկասի համար անյետաձգելի խնդիր է։ Նա արժանի է մամուլի լուրջ ուշադրութեան և բազմակողմանի ուսումնասիրութեան։ Դա գուցէ առաջինն է այն հարցերից, որ պէտք է դնեն Անդրկովկասի ներկայացուցիչները Պետական Դումայում։

Արիւնաներկ, տանջված ու գզգզված Անդրկովկասն այն ժամանակ միայն կարող է ազատ շունչ քաշել և իր դժբաղդութիւններից ազատված համարել իրան, երբ նա կը ստանայ ներքին լայն աւտօնոմիական իրաւունքներ։ Այն ժամանակ միայն նա կարող է այնպէս ծաղկել ու զօրանալ, որ յիրաւի արժանի կը լինի կոչվելու մեծ Ռուսաստանի թանկագին ադամանդը։

Լ. Մարկոսեան

Երեւան

ՀԷՆՐԻԽ ԻԲՍԷՆ

Հեռագիրը յայտնեց, որ նորվեգիական հռչակաւոր դրամատուրգ Հէնրիխ Իբսէնը վախճանվել է Քրիստիանիա քաղաքում։

Իբսէնը ծնվեց 1828 թ. Սկիէն փոքրիկ քաղաքում, Քրիստիանի ծոցի ափին։ Նա ծագել է մի հին և հարուստ ընտանիքից, որ 1720 թ. եկաւ հաստատվեց Նորվեգիայում։ Նրա հայրը՝ Կնուդ Իբսէն, մի փորձունեայ և առոյգ բնութեամբ մարդ էր, իսկ մայրը—գերմանուհի, սաստիկ աստուածապաշտ և խստաբարոյ մի կին էր։ Կնուդը սնանկացաւ 1836 թ. և հարուստ, լաւ կեանքի սովոր ընտանիքի կենցաղը սաստիկ փոխվեց։ Ինչպէս պատահում է սովորաբար, աղքատութեան պատճառով ընտանիքից հեռացան նախկին բարեկամները, ծանօթները և պատանի Իբսէնը, որ ի բնէ վայրի և անհաղորդակից էր, սկսեց աւելի սիրել առանձնութիւնը։ Տարրական դպրոցում նա զարմացնում էր ուսուցիչներին իր գեղեցիկ շարադրութիւններով։ Աղքատութիւնը ստիպեց նրան 16 տարեկան հասակում մտնել մօտակայ քաղաքի դեղագործի մօտ իբրև աշակերտ։ Այդպէս և թողեց իր հայրենիքը, ուր այլ ևս չը վերադարձաւ և 5 տարի ծառայեց դեղագործի մօտ. ամբողջ ժամանակ նա մի տենչանք ունէր—կրթութիւն և դօքտորական աստիճանի դիպլոմ ստանալ։ Նա ջերմ կերպով ընդգրկեց 1848 թւի յեղափոխական մտքերը և իր առաջին ստանաւորով երգեց ունգարացի հայրենասէր—նահատակներին։ Կեանքը նրա համար դեղարանում հետզհետէ անտանելի էր դառնում. նա իր դէմ էր յարուցել փոքրիկ քաղաքի հասարակական կարծիքը իր յեղափոխական մտքերով, պատասխանութեամբ և խստութեամբ, ուստի որոշեց ձգել այդ քաղաքը և գնաց Քրիստիանիա, ուր սկզբներում չարքաշ և զրկանքներով լի կեանք վարեց։ Այստեղ նա ծանօթացաւ Բիէօրնսօնի հետ, որ ապագայում դարձաւ նրա ջերմ հակառակորդը։

Բիէօրնսօնի և մի քանի ուրիշ գրողների հետ միասին նա 1851 թ. հիմնեց մի շաբաթաթերթ «Անդրիմնէր» անունով, որ միայն մի քանի ամիս տեւեց։ Այդտեղ նա հրատարակեց մի քանի պօէմաներ և «Նորմա» դրամատիքական երգիծաբանութիւնը։ Շուտով նա ստացաւ Բերգէն քաղաքի ժողովրդական Թատրոնի մէջ րէժիսորի և տեսչի պաշտօն, իսկ 1857 թ. նոյն պաշտօնով անցաւ Քրիստինիա։ 1858 թ. նա ամուսնացաւ և շատ երջանիկ էր ամուսնական կեանքի մէջ։ Վերջապէս 1864 թ. երկար ջանքերից յետոյ, Իբսէնը ստացաւ պօէտի Թօշակ ստորթինգից և օգտվեց դրանով հարաւ գնալու համար։ Առաջ նա բնակութիւն հաստատեց Հռոմում, ուր ապրում էր առանձնութեան մէջ, ապա անցաւ Տրիէստ, Միւնխէն և Դրէզդէն, որտեղից գնաց Բերլին։ Վերջին ժամանակները նա շարունակ ապրում էր Միւնխէնում և Քրիստիանիայում։

Նա գրել է բազմաթիւ դրամաներ, որոնք շարունակ խաղացվել են Բերգէնի, Քրիստինիայի, Կոպենհագէնի, Ստօքհօլմի և Գերմանիայի բեմերի վրա և թարգմանվել գրեթէ բոլոր լեզուներով. մի քանիսը թարգմանված են և հայերէն։

Թէև Իբսէնի պիէսները մօտ ժամանակներս յայտնի դարձան Եւրոպային, բայց նրա փառքը զարմանալի արագութեամբ տարածվեց և քննադատները, խօսելով ժամանակակից գրականութեան բարձունքների մասին, յիշում են նորվեգիացի դրամատուրգին Տօլստօյի և Զօլայի անունների հետ միասին։ Նա ունի մոլեռանդ երկրպագուներ, բայց ունի և խիստ հակառակորդներ, որոնք համարում են նրա աջողութիւնը՝ հիւանդոտ։ Նրա փառքը և հռչակը ստեղծել են ոչ թէ նրա պատմական պիէսները, այլ ժամանակակից կեանքից վերցրած կոմեդիաները և դրամաները։

Ըստ տրամադրութեան և հիմնական իդէայի, Իբսէնի ժամանակակից պիէսները երկու կարգի են բաժանվում—մերկացուցիչ կոմեդիաներ և հոգեբանական դրամաներ։ Մեր հայ հասարակութեան աւելի յայտնի են Իբսէնի «Ժողովրդի Թշնամին» կամ «Դօքտոր Շտօկման», «Նորա», «Վայրի բադ» դրամաները։

ՄԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցաւ պ. Խաժակի դասախօսութիւնը՝ «Կառավարական ձեւերը Եւրոպայում»։ Դահլիճը լիքն էր ունկնդիրներով, որի մեծ մասը պ. Խաժակի անբաժան կլակիօրների սվիտայից էր կազմված։

Դասախօսը ըստ իր սովորութեան խօսեց շատ երկար ու չափազանց ջրալի։ Նա շատ ընդարձակ կերպով խօսեց և՛ բացարձակ միապետութեան մասին, և սահմանադրական միապետութեան, և՛ հանրապետութեան, և կենտրոնացման, և ապակենտրոնացման մասին, օրինակ բերեց թէ Անգլիան, թէ Ֆրանսիան, թէ Գերմանիան, թէ Բուլղարիան, թէ Ռուսաստանը, թէ Մեքսիկան, թէ Բրազիլիան, և Աւստրալիան, թէ Շվէյցարիան—մանաւանդ Շվէյցարիան, մի խօսքով՝ բոլոր պետութիւնները, ամբողջ աշխարհ տակն ու վրա արեց, բայց իսկապէս ոչինչ չասեց, ոչինչ չը բացատրեց։

Կէս ճիշտ, կէս չափազանց սխալ կերպով նկարագրեց և բիւրօկրատիական աբսոլիւտիզմը, և Գերմանիայի սահմանադրական-միապետական ֆեդերալիզմը, և Անգլիայի բոլոր տեղական ինքնավարութիւնները, և Շվէյցարիայի ու Ամերիկայի ֆեդերալիզմը, բայց պ. Խաժակը մոռացաւ բացատրել միայն մի բան, որ ամենից կարեւորն ու էականն էր։

Այդ, ըստ Խաժակի «չնչին» և անկարեւոր բանը այն էր, որ փոքր ի շատէ ուղեղի տէր ունկնդրի համար միանգամայն մութ և անհասկանալի մնաց, թէ ինչու արդեօք զանազան եւրոպական կամ այլ երկրներում, իրարից բոլորովին տարբեր կառավարչական ձեւեր են հաստատվել։ Ինչու, օրինակի համար, քաղաքակիրթ համարված Ֆրանսիայում, ըստ պ. Խաժակի, բիւրօկրատիան ահագին ույժ ունի, իսկ Բուլղարիան աւելի դեմօկրատական երկիր է։ Ինչու փոքրիկ Շվէյցարիան ֆեդերատիւ կառավարութիւն է հաստատել, իսկ Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի նման գիտութեան շտեմարանները այդպիսի կարգեր չեն ընդունել և չեն էլ մտածում ընդունել։ Նմանապէս պ. Խաժակը մի մեծ պաթոսով յայտարարեց, թէ կառավարութեան ֆեդերատիւ ձեւը «գիտութեան վերջին խօսքն է»։

Եւ այդ մարդը յանդգնութիւն ունի դեռ իրան սօցիալիստ անուանել, մատերիալիստական Թէօրիայով համեմել իր մանր բուրժուական աշխարհահայեցողութիւնը։ Կասկածս, տնտեսական մատերիալիզմի և սօցիալիզմի անունից խօսող այդ միամիտը, իսկի տեղեկութիւն էլ չունի, որ գիտական սօցիալիզմի դաւանողներից և ոչ մէկը չէ կարող ֆեդերալիստական կառավարչական ձեւը իր համար իդէալ համարել, ինչպէս այդ պարծենկոտութեամբ համարում է պ. Խաժակը։

Պարոնը, Թութակի նման կրկնելով, թէ ամեն մի կառավարչական ձեւ միանգամայն կախումն ունի երկրի տնտեսական ստրուկտուրայից, երկրում գործող ույժերի կամ դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնից, միեւնոյն ժամանակ չէ կարողանում ըմբռնել, որ ամբողջ աշխարհի տնտեսական զարգացումը միշտ և հսկայական քայլերով տանում է դէպի կապիտալիզմի կենտրոնացումը, որի շնորհիւ իւրաքանչիւր պետութեան, եթէ չասենք ամբողջ երկրագնդի, ամեն անկիւններում հետզհետէ ստեղծվում են միատեսակ պայմաններ, միատեսակ կարգեր, որոնք իրերի բնական ընթացքով ու պահանջով անհրաժեշտ են դարձնում և երկրի օրէնսդրական վարչութեան կենտրոնացում։ Ցաւալին այն է, որ պ. Խաժակը չափազանց շփոթում է օրէնսդրական կենտրոնացումը՝ վարչական և դատաստանական կենտրոնացումների հետ, որոնց՝ սօցիալիստ եզրը շատ լաւ գիտէ զատել միմեանցից։ Եւ հենց այդ է պատճառը, որ գիտական սօցիալիզմի հետեւողները միանգամայն կողմնակից լինելով օրէնսդրական կենտրոնացման, նոյնչափ էլ կողմնակից են և վարչական ու դատաստանական ապակենտրոնացման։

Պ. Խաժակի առաջին ընդդիմախօսն էր պ. Իշխանեանը, որը շատ հմուտ կերպով մատնանշեց դասախօսի հակասութիւնները ու նրա ոչ մի որոշ աշխարհայեցողութիւն չունենալը։ Ափսոս որ պ. Իշխանեանը, մոռանալով թէ ինչպիսի աուդիտորիայի հետ գործ ունի, չափազանց երկար բացատրութիւնների մէջ մտաւ և մի քիչ էլ խիստ լեզուով խօսեց, որով դասախօսի սվիտան ահագին աղմուկ բարձրացրեց և սօցիալ-դեմօկրատ ժողովականներից շատերը հեռացան։ Դրանից յետոյ պ. Իշխանեանը հրաժարվեց խօսելուց։ Բայց նա հասկացողների համար արդէն շատ բան էր ասել։

Դասախօսը չը համբերեց և բարձրացաւ իսկոյն պատասխանելու, կամ աւելի ճիշտ է ասել, հայհոյելու իր ընդդիմախօսին և, իր հայհոյանքներով այնքան ոգեւորվեց (իրաւունք էլ ունէր ոգեւորվելու, որովհետեւ կլակիօրները սաստիկ ծափահարում էին), որ ձեռքը ականջին մօտեցնելով «շուշեցու ականջ» անուանեց իր ընդդիմախօսի ականջը։ Այդ անվայել վարմունքը զայրոյթի աղմուկ առաջացրեց, որից ստիպված պ. Խաժակը ներողութիւն խնդրեց։

Կարճառօտ կերպով ընդդիմախօսեցին և պ. պ. Խանզադեան, Արասխանեան, վերջը և ինքը նախագահը պ. Վերմիշեան։ Խօսեց, ի հարկէ, և Խաժակի alter ego-ն, Թօփչեանը։

Ժողովի վերջաբանը ամենից զուարճալին է։ «Խաժակ, Թօփչեան և ընկերութիւն» կամեցան ժողովի կողմից ռէզօլիւցիա անցկացնել այն մտքով, թէ ժողովը ֆեդերալիզմի կողմն է։ Բայց պ. նախագահը լաւ հասկանալով, թէ ինչպիսի աուդիտորիայի հետ գործ ունի, Թոյլ չը տուեց, որ ռէզօլիւցիան Խաժակը կամ Թօփչեանը ներկայացնեն, այս վերջինին նոյն իսկ բեմից հեռացրեց, այնպէս որ ռէզօլիւցիան ներկայացնողը աուդիտորիային անծանօթ մի «ընկեր» էր։ Պ. նախագահը, Խաժակի վրա հսկելով, սրան զրկեց ունկնդիրներին ռէզօլիւցիան ընդունելու նշան տալու հնարաւորութիւնից, իսկ ինքը իր կողմից բարձրաձայն կասկած յայտնեց ռէզօլիւցիան ընդունվելու մասին, և այդ բաւական եղաւ, որ ահագին աղմուկով ռէզօլիւցիան չընդունվի, որովհետեւ սվիտան չէր կարողացել հասկանալ, թէ պ. նախագահը և դասախօսը բոլորովին հակառակ համոզումների տէր մարդիկ էին ֆեդերացիայի խնդրի վերաբերեալ. նա ծափահարել էր թէ մէկին թէ միւսին։

Խ.

ԲԱԶԷԻ ԵՐԳԸ

I

(Մաքսիմ Գորկիից)

(Գրիգոր Արծրունու անմահ յիշատակին)

Բարձրաբերձ, ձիւնածածկ լեռան գագաթը բարձրացաւ Իժը և այնտեղ, լեռան խոնաւ խոռոչներից մէկում գալարվելով պառկեց ու սկսեց կապուտակ երկինքը դիտել։

Բարձր երկնքում արեգակն էր փայլում և նրա կիզիչ ճառագայթների տակ վառվում էր լեռան գագաթը. ներքեւում՝ ծովի անհանգիստ ալիքներն էին պարբերաբար զարկվում ծովափեայ ժայռերին, փշրվում, յետ-յետ փախչում…

Նեղ ու խոնաւ խոռոչի միջից էլ մթութեան մէջ աղմկելով, կարկաչելով, դէպի ծովն էր շտապում չարաճճի լեռնային գետակը։

Ամբողջովին փրփուրի մէջ կորած, ուժեղ ու ալեզարդ, պատռելով լեռան կուրծքը, նա ծովն էր Թափվում ահագին աղմուկով։

Յանկարծ այն խոռոչը, որտեղ Իժն էր գալարված-պառկած, Թպրտալով վայր ընկաւ վերեւից վիրաւոր Բազէն, ջարդված կրծքով և արիւնաթաթախ Թեւերով։

Մի Թոյլ ճիչ արձակելով՝ նա գետին ընկաւ և, իր անզօր բարկութեան մէջ, սկսեց կուրծքը քարերին զարկել…

Իժը վախեցաւ. շտապով դէպի մի կողմ սողաց, բայց շուտով հասկացաւ, որ Թռչունը միայն մի քանի րոպէ կեանք ունի…

Մօտ սողալով վիրաւոր Թռչունին՝ նա հարցրեց։

—Ի՞նչ է, մեռնո՞ւմ ես։

—Այո, մեռնում եմ… խոր հառաչելով պատասխանեց Բազէն։—Ես փառաւոր կերպով ապրեցայ… Ես գիտեմ ինչ է բախտաւորութիւնը… Ես քաջութեամբ կռուեցայ… Եւ տեսայ երկինքը… Այնպէս մօտիկ դու չես կարող տեսնել նրան, Թշուառական…

—Ի՞նչ է երկինքը—դատարկ տեղ… Ի՞նչպէս կարող եմ ես սողալ այնտեղ։ Ինձ համար այստեղ էլ շատ լաւ է, տաք և խոնաւ…

Այսպէս պատասխանեց Իժը ազատ Թռչունին և իր մտքումը ծիծաղեց նրա զառանցանքների վրա։

Նա այսպէս էր մտածում. «Թէ սողացողի և թէ Թռչողի վախճանը մէկ է. ամենքն էլ գետնի տակ պէտք է պառկեն, ամենքն էլ հող պէտք է դառնան»…

Իսկ համարձակ Բազէն յանկարծ Թափահարեց իրան, փոքր ինչ բարձրացրեց գլուխը և նայեց շուրջը։

Գորշագոյն քարէ զանգուածից կաթկթում էր ջուրը և խոռոչի մէջ մութ ու խոնաւ էր ու պղտոր հոտութիւն էր տիրում այնտեղ։

Եւ իր բոլոր ույժերը ի մի հաւաքելով անձկութեամբ ու խորին կսկիծով բացագանչեց Բազէն։

—Օ՜, եթէ կարողանայի գէթ մի անգամ երկինք բարձրանալ… Թշնամուն կը սեղմէի… կրծքիս վէրքերին և… կը խեղդէի նրան իմ արիւնով… Օ՜, կռւի երջանկութիւն։

Իսկ Իժը մտածում էր. «Երեւի երկնքումը ապրելը իսկապէս լաւ է, որ նա այնպիսի կսկիծով է յիշում նրա մասին»…

Եւ ազատ Թռչունին նա հետեւեալն առաջարկեց. «Մօտեցիր խոռոչի ծայրին և այնտեղից ներքեւ Թռիր. մի գուցէ վիրաւոր Թեւերդ բարձրացնեն քեզ և դու մի քիչ էլ ապրես քո ցանկալի բախտաւորութեամբդ»…

Դողաց վիրաւոր Բազէն և Թեթեւ ճիչ արձակելով գնաց դէպի խոռոչի ծայրը, սողալով ժայռի վրայից։

Եւ, մօտենալով նրան, ուղղեց Թեւերը, ազատ շունչ քաշեց ամբողջ կրծքովը ու ներքեւ գլորվեց։

Եւ ծանր քարի պէս ժայռի վրայից սողալով, նա արագութեամբ ներքեւ էր գլորվում, կոտրտելով Թեւերը, կորցնելով փետուրները։

Գետակի ալիքները ընդգրկեցին նրան, լուացին փետուրներից արիւնը և փրփուրի մէջ կորցնելով դէպի մրրկածուփ ծովը Թափեցին նրան։

Իսկ ծովի ալիքները տխրագին գոռոցով շարունակում էին ժայռերին զարկվել… Եւ Թռչունի դիակը չէր երեւում նրանց մէջ…

II

Խոռոչում պառկած՝ Իժը երկար ժամանակ մտածում էր Բազէի մահվան և նրա երկնքի կարօտի մասին։

Եւ ահա նայեց նա դէպի բարձր հեռուն, դէպի կապուտակ երկինքը, որ բախտաւորութեան ցնորքներով միշտ հայեացք է գրգռում…

—Իսկ ինչ էր տեսնում երկնակամարի այդ անվերջ, անյատակ անապատումը մեռնող Բազէն։ Ինչու նրա նմանները մեռնելով սիրտ են վրդովում իրանց դէպի երկինք Թռչելու սիրովը։ Ի՞նչ կայ այնտեղ։ Չէ՞ որ ես էլ կարող եմ իմանալ այդ բոլորը։

Ասաց և արեց. օղակի պէս գալարվելով նա Թռաւ և ժապաւէնի պէս ձգվեց օդի մէջ։

«Սողալու համար ծնվածը—Թռչել չէ կարող…» Մոռանալով այդ բանը, նա վայր ընկաւ, քարերին զարկվեց, բայց չը մեռաւ, այլ միայն ծիծաղեց…

—Ահա ուրեմն ինչումն է կայանում Թռչելու լաւութիւնը—նա ընկնելու մէջն է… Միայն այդ… Ծիծաղելի Թռչուններ… Չը ճանաչելով երկիրը, նրա վրա տրտմելով, նրանք դիմում են դէպի երկինք և կեանք են խնդրում տօթ անապատում։ Այնտեղ միայն դատարկութիւն է։ Այնտեղ շատ են օդն ու լոյսը, բայց մարմնի համար յենակէտ չը կայ։ Ուրեմն ինչու համար է հպարտութիւնը։ Ինչու համար են այդ խայթոցները. նրա համար, որպէս զի ծածկեն նրանով իրանց խենթային ցանկութիւնները և կեանքի համար անպէտքութիւնը… Այժմ այլեւս չեն խաբիլ ինձ նրանց խօսքերը… Ես ինքս ամեն բան գիտեմ. ես տեսայ երկինքը… Թռչելով այնտեղ, ես չափեցի նրան, զգացի անկման ույժը, բայց չը մեռայ… Թո՛ղ նրանք, որոնք չեն կարողանում երկիրը սիրել, ապրեն խաբելով… Ես այժմ գիտեմ ճշմարտութիւնը և նրանց կոչերին չեմ հաւատում այլեւս։ Ես ծնված եմ երկրի վրա և նրա վրա էլ կապրեմ։

Եւ հպարտ ինքն իրանով, նա կծկվեց քարերի վրա։

III

Իսկ ծովը շարունակում էր փայլել արեգակի փայլուն ճառագայթների տակ և նրա ալիքները աղմկելով ափերին էին զարկվում։

Նրանց առիւծային մռնչիւնների մէջ հպարտ Թռչունին փառաբանող երգն էր հնչում… Եւ դողում էին ժայռերը նրանց ձայնից ու երկինքը՝—սպառնալի երգից։

«Քաջերի խենթութեանը փառք ենք մենք երգում…»

«Քաջերի խենթութի՛ւն—ահա կեանքի իմաստը… Օ՜, համարձակ Բազէ, Թշնամիների հետ կռուելով դու արիւնաքամ եղար… Բայց կը գայ ժամանակ և քո արեան կաթիլները կայծերի պէս կը վառվեն կեանքի խաւարում և շատ համարձակ սրտեր կը վառեն ազատութեան և լոյսի հզօր ցանկութեամբ…

«Հոգ չէ Թէ դու մեռար… Հոգով համարձակների և ուժեղների երգում, ազատութեան և լոյսի կռւում դու միշտ կենդանի օրինակ կը մնաս…

«Քաջերի խենթութեանը փառք ենք մենք երգում…»

Վ. Թումանեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հնչեշտ (Բեսսարաբիա)

«Մշակ»-ի № 86-ում, «Թատրոն և երաժշտութիւն» բաժնի մէջ, «Страна»-ից քաղուածօրէն առաջ էր բերված Տ. Նալբանդեանի համերգի մասին և վերջում առանձին գովասանքով խօսվում էր երգչուհի տ. Ս. Ե. Մաղակի վերաբերմամբ։ Առիթից օգտվելով արժէ մի քանի խօսք ասել հայազգի օրիորդ (սխալմամբ տիկին գրված) Սուլթան Յակոբեան Մաղաքի մասին, որը լաւ ապագայ է խոստանում իբրև երգչուհի։ Օրիորդը բնիկ բեսսարաբեցի է, Հնչեշտ աւանից. սովորել է նախ Հնչեշտի գիւղական երկդասեան դպրոցում և ապա քննութիւն բռնել գիմնազիայի չորրորդ դասարանի. պատահմամբ ուշադրութիւն է դարձնում նրա արտասովոր գեղեցիկ ձայնի վրա և ընկերուհիներից մէկը համոզում մտնել երաժշտական դպրոց. իբրև մի հատիկ զաւակ, ոչ ունեւոր ծնողները, չը նայած տեղիս հայերի տածած խոր անհամակրութեան դէպի գեղարուեստը, չեն յետ կանգնեցնում օրիորդին իր ձգտումից և մի կերպ պահում են Քիշնեւի մասնաւոր երաժշտական դպրոցում, ուր մնում է 4 տարի և աւարտում իբրև առաջին աշակերտուհի. այնուհետեւ Մանուկ-բէյ Իշխանեանու օժանդակութեամբ դիմում է Պետերբուրգ և մտնում կոնսերվատորիա՝ երգեցողութեան բաժանմունքը, որտեղ իր ուսման ընթացքը առ այժմ չէ աւարտել բոլորովին։ Դեռ Քիշնեւում աշակերտ եղած ժամանակ մասնակցել է մի շարք համերգների և միշտ էլ մեծ գովասանքի արժանացել տեղական Թերթերի կողմից։ Ցանկանում ենք օրիորդին փայլուն ապագայ և չը մոռանալ նպաստելու և ազգային գեղարուեստի առաջադիմութեանը։

Տ. Ք. Աբրահամեան

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Մայիսի 7-ին

«Ալէքսանդրապօլի քաղաքագլուխը» վերնագիր ունեցող պ. Մոճոռեանի յօդուածը («Արշալոյս» № 54) զայրոյթ պատճառեց տեղիս ընթերցողներից շատերին։ Փաստերի փոխարէն կարիք չը կար բամբասանքների։ Տեղիս քաղաքային գործերին անծանօթ ընթերցողն ինչ համոզմունք կարող է կազմել վերոյիշեալ յօդուածը կարդալիս—մեր քաղաքի հասարակութեան, ձայնաւորների և մանաւանդ քաղաքագլխի մասին։ Այդպիսիներին մոլորութիւնից ազատ պահելու համար, ստիպվեցի երկտողով հրապարակ դնել ճշմարտութիւնը։

Պ. Գ. Տէր-Պետրոսեանը վարել է քաղաքագլխի պատասխանատու պաշտօնը հենց քաղաքային վարչութեան բացման օրից մինչեւ օրս, համարեա ինը տարի։ Անցեալ տարի նա տուել է իր հրաժարականը և միեւնոյն ժամանակ «Մշակ» լրագրի միջնորդով յայտնել է ի լուր բոլորի իր հրաժարվելու մասին։ Թշնամի խմբակը այդ հրաժարականը համարում էր ոչ անկեղծ, այն ինչ այսօր կատարված փաստ է։ Մի քանի անգամ մասնաւոր, երկու անգամ էլ առանձին պատգամաւորութեամբ տեղիս քաղաքային խորհուրդը դիմեց պ. Տէր-Պետրոսեանին, որ նա շարունակէ իր պաշտօնը մի քառամեակ էլ, բայց նա հաստատ մնաց իր որոշման վրա, որպէս հաստատակամ և դրական մարդ։ Քաղաքային գործերը լինելով իր սրտին մօտ, նա մի կողմ թողնելով բժշկի խորհուրդը—որ նրան հարկաւոր է հանգստանալ, ի նկատի առնելով, որ մեր ձայնաւորները մնացել են անել դրութեան մէջ, չը գտնելով իրան փոխարինող մէկին, մօտ մէկ տարի էլ շարունակեց պաշտօնավարութիւնը, մինչեւ որ վերջապէս մօտ օրերս ընտրեցին նոր քաղաքագլուխ։

Դեռ ևս անցեալ փետրվար ամսում տեղիս քաղաքային խորհուրդը իր նիստերից մէկում Պ. Գ. Տէր-Պետրոսեանի բացակայութեան ժամանակ որոշեց նրա պատկերը կախել խորհրդի դահլիճում ի նշան նրա երկարամեայ և բազմօգուտ ծառայութեան։ Կային աւելի երախտագէտ անձինք, որոնք այդ էլ քիչ համարելով ուզում էին պսակել պ. Տէր-Պետրոսեանի բազմօգուտ ծառայութիւնը այլ բաներով, բայց նա համեստութեամբ խոյս տուեց։ Տեղիս հասարակութիւնը շատ լաւ է ճանաչում իր երախտաւոր գործիչին, այնպէս էլ ապերախտին, գիտէ արժանաւորին գնահատել և անարժանին խիստ պատժել։ Եթէ արդարեւ պ. Գ. Տէր-Պետրոսեանը վայելում է այդպիսի ժողովրդականութիւն և յայտնի է իր գործունէութեամբ, ուրեմն ինչի՞ց ստիպված է գրել պ. Մոճոռեանը վերոյիշեալ յօդուածը։ Այդպիսի հարց կարող են տալ ինձ միայն գործին անտեղեակ ընթերցողները։ Այդ հարցի պատասխանը շատ կարճ է.—Պէտք է ծանօթ լինել տեղիս քաղաքային վարչութեան երկու արձանագրութիւնների հետ, որից յետոյ ընթերցողին պարզ կը լինի, թէ ինչու պ. Մոճոռեանը 1901 թ. ստիպված եղաւ թողնել և հեռանալ քաղաքային վարչութեան շէնքից, զրկվելով իր տասն և հինգ ռուբլի խղճուկ ռոճիկից։ Դեռ ևս յիշեալ արձանագրութիւնները գոյութիւն չունէին, որ յօդուածագիրը որպէս «Մշակ»-ի փչված Թղթակից, իր շողոքորթ լուրերով խնկարկութիւններ էր անում իր մեծաւորին, այսօրվան հակառակորդ պ. Գ. Տէր-Պետրոսեանին, թէ «քաղաքագլուխը իր Թանգագին մատենադարանը, որ հազարների արժէք ունի, նուիրեց քաղաքի գրադարան-ընթերցարանին», այն ինչ այն ժամանակ քաղաքագլուխը նուիրել էր միայն մի քանի կտոր գրքեր։ Այսպիսի Թղթակցութիւններով նա ուզում էր պ. Գ. Տէր-Պետրոսեանի ուշադրութիւնը իր վրա գրաւել որոշ նպատակների համար, բայց ափսոս որ նա ուրիշների նման չէր, որ հալած իւղի տեղ ընդունէր։

Բանալի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 12-ին

«Մշակի» № 86 համարում «Ոստիկանական տեղեկութիւնների» բաժնում տպված է հետեւեալ լուրը. «Թիֆլիսի բնակիչ Սպանդար Ամիրջանեան Սպանդարեանը, որը բնակվում է Գրիբօեդօվսկի փողոցի վրա Թիւնիբէկեանի տանը, յայտնեց 2-րդ քաղաքամասի ոստիկանութեան, որ ապրիլի 21-ին, երեկոյեան մօտ ժամը 6-ին, նրա բացակայութեան ժամանակ նրա բնակարանից տարել են 150 ր. կանխիկ դրամ։ Գողութեան մէջ Ս. Սպանդարեանը կասկածում է շուշեցի Միսակ Զարանովին (կարդա Զարաֆեանց), որը ձերբակալված է 7-րդ քաղաքամասում, որի մօտ փող ամենեւին չէ եղել և որը արած գողութիւնը չէ խոստովանում։

Թոյլ տուէք սրանով յայտնել, որ Ս. Սպանդարեանը միանգամայն զրպարտել է ինձ, որի պատճառով ինձ ձերբակալեցին և նստացրին 19 օր բանտում։ Գործը քաղաքիս I մասի հաշտարար դատաւորի մօտ քննվեց, որը և արդար ճանաչեց ինձ. Թոյլ տուէք յայտնել և այն, որ պ. այդ «հրապարակախօսի» զրպարտութեան պատճառով ես բացի բանտ նստելուց և բարոյական տանջանքներ կրելուց, ունեցայ և ինձ համար շատ զգալի նիւթական վնասներ և այժմ մնացել եմ առանց գործի, ունենալով ուսերիս վրա ընտանիք…

Թող հասարակութիւնը դատէ պ. Սպանդարեանի վարմունքը։

Միսակ Զարաֆեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Առաջիկայ 1906/7 թ. ուսումնական տարուց րէալական ուսումնարաններում աւանդելի առարկաների Թւում մտցնվում է և օրէնսգիտութիւնը 7-րդ դասարանում։ Բացի այդ՝ առաջիկայ ուսումնական տարուց տղայոց գիմնազիաներում և րէալական ուսումնարաններում աւանդվելու է որպէս ոչ պարտաւորական առարկայ—առողջապահութիւնը։

Ինչպէս յայտնի է, Պետական Դումայի նախագահը՝ Մուրոմցեվ, ընդունվեց Կայսրից և գտաւ շատ մեծ ու շատ սիրալիր ընդունելութիւն։ Թէ ինչ խօսակցութիւն տեղի ունեցաւ Մուրոմցեվի և Կայսրի միջեւ, մնաց գաղտնիք։ Հեռագրական գործակալութիւնը հաղորդեց սակայն, որ այդ տեսակցութեան միջոցին չը շօշափվեց քաղաքական բնաւորութիւն ունեցող ոչ մի հարց։ Դումայի պատգամաւորնե-

---

*) Петиція армянъ. § 2 в) учрежденіе одного общезакавказскаго земскаго собранія съ правомъ законодательной иниціативы и предварительнаго обсужденія всѣхъ законоположеній касающихся Закавказья.

րից մէկը «Թայմըզի» Թղթակցին ասել է, որ Մուրոմցեվը յատկապէս խնդրել է իր ընկերներից, որ այդ այցելութեան մասին ոչ մի հարցմունք չուղղեն իրան, Դումայում։ Միւս կողմից, յիշեալ Թերթի Թղթակիցը հաստատում է, որ Մուրոմցևի բարեկամներից մէկը յայտնել է, որ Պետերհօֆում, կայսրի կողմից ունկնդրութեան ընթացքում, Մուրոմցևը ակնարկել է այն տպաւորութեան մասին, որ առաջ է բերել Պետրունկևիչի ճառը ամնիստիայի վերաբերմամբ։ Կայսրը, խօսքն շրջել է խօսակցութիւնը մի այլ նիւթի վրա, ասելով որ ինքը տեղեակ է այն բոլորի մասին, ինչ կատարվում է Դումայում։ Ոմանց յայտարարութեան համաձայն, շարունակում է Թղթակիցը, Դումայում, վիճաբանութիւնների սրահի մի անկիւնում կայ մի միկրոֆօն, այսինքն ձայնատար փոքրիկ խողովակ, որի միջոցով կայսրը հնարաւորութիւն ունի հետևելու արտասանված բոլոր ճառերին։ Եւ, ինչպէս յայտնում են, կայսրը սիրում է ժամերով լսել հռետորների ճառախօսութիւնը։

—

Աղէտեալների օգտին ստացանք. 1) Ներքին-Ախալցխայից—Գաբրիէլ Մուրադեանից 10 ր., 2) Նօլամթանից—մի խումբ հայերից ժողոված Մարտիրոս Ստեփանեանցի միջոցով 50 ր., 3) Բագուից—Եղբ. Միրզաբէկեանցների ծխախոտի գործարանի ասպ. և կրտսեր ծառայողներից մի ամսվայ ռոճկի 1%—15 ր. 38 կ., 4) Բագուից N-ից 10 րուբլի։

—

Ազատ տնտեսական ընկերութեան բնակարանում Վէյնբերգի նախագահութեամբ կայացել է Պետերբուրգի սիօնիստների ընդհանուր ժողովը, նուիրված այն հարցին Թէ Պետական Դումայի մէջ հրէական պատգամաւորները ինչ դիրք պէտք է բռնեն։ Կարդացվեց զեկուցում հետևեալ Թեմայի մասին. «Ազգային հրէական գրուպպան Պետական Դումայում»։ Երկարատև տաք վիճաբանութիւններից յետոյ ժողովը ընդունեց հետևեալ բանաձևը. «Պետերբուրգի սիօնիստների ընդհանուր ժողովը աչքի առաջ ունենալով. 1) որ Ռուսաստանի հրէաները պատկանում են մի առանձին ազգութեան, 2) որ հրէական ազգութիւնը ունի իր զուտ տնտեսական և քաղաքական կուլտուրական պահանջները, 3) որ այդ պահանջներից առաջացող ուրոյն ազգային խնդիրները կարող են ստանալ աւելի ճիշտ դասաւորութիւն այն դէպքում միայն, եԹէ հրէութեան ընտրած ներկայացուցիչները Պետական Դումայում կը վարվեն հրէական ժողովուրդի արժանաւորութեան ու պատուի համաձայն և կը կազմեն մի առանձին հրէական ազգային խմբակ Դումայում, Պետերբուրգի սիօնիստների ընդհանուր ժողովը պահանջում է, որ հրէութեան ընտրած պատգամաւորները անյապաղ կազմակերպեն պարլամենտական հրէական ազգային մի խմբակ, միացած իրար հետ ներքին դիսցիպլինայով, և հրէական պատգամաւորները Դումայում խօսեն խմբակի անունից։ «Дума»

—

Մինսկի քաղաքի պատգամաւոր երդուեալ հաւատարմատար Լեվնիցկու նախագահութեամբ ամենայն օր տեղի են ունենում աւտոնօմիստների խմբակի ժողովները, որոնց անդամների Թիւը արդէն 100-ի է հասնում։ Այդ խմբակի մէջ մտել են Լեհաստանի, Ուկրաինայի, Լիտվայի, Պրիբալտեան երկրի, Ուրալի կօզակների շրջանի և զանազան ազգութիւնների ներկայացուցիչները։ Այժմս արդէն կազմակերպվում է աւտոնօմիստների պարլամենտական խմբակը։ Սպասում են Սիբիրի և Կովկասի ներկայացուցիչներին։ Այժմ կազմակերպվում է աւտոնօմիստների պարլամենտական կուսակցութիւն, որը սկզբներում զբաղվելու է շրջանների բաժանումով, որոնց մէջ աւտոնօմիան հնարաւոր է մտցնել, և այն տեղերի որոշումով, ուր անհրաժեշտ է մտցնել շրջանային ինքնավարութիւն։ Ներկայումս սկսել են մշակել լեզուի օրէնքի նախագիծը, որը պէտք է զարթեցնվի Դումայում առաջին հերԹում։

—

Բագուից մայիսի 9-ին մեզ հաղորդում են, որ վերջին ժամանակներս այնտեղ Թուրքերի երկու կուսակցութիւնների մէջ յաճախակի ընդհարումներ են տեղի ունենում, որի ժամանակ առ հասարակ տուժում են բոլորովին անմեղ անցորդները։ Այս վերջին շաբաթվայ ընթացքում եղել են 5—6 ընդհարումներ։ Միևնոյն օրը, մայիսի 9-ին, երեկոյեան ժամի 9-ին, դարձեալ ինչ որ երարանցումն է պատահել, որի հետևանքը յայտնի չէ։ Այդ ընդհարումների բուն պատճառը դժուար է լինում որոշել։ Հայ-Թուրքական մղձաւանջի վրա աւելանում է մի նորը։ Ե՞րբ պէտք է վերջանան մեր դժբաղդ երկրում արիւնհեղութիւնները և մենք ազատ շունչ քաշենք, խաղաղ կեանք վարենք։

—

Հինգշաբթի, մայիսի 11-ին, քաղաքիս 4-դ մասում, Սօլօլակում, ցերեկվայ ժամի 2-ին դարձեալ մի յանդուգն կողոպուտն է տեղի ունեցել։ Հինգ զինված խմբէշներ ներս են խուժել Սարգսեանի տունը և մահվան սպառնալիքով յափշտակել են նրանից մինչև 300 ր. առձեռն դրամ և մի քանի իրեղէններ և անհետացել են առանց ձերբակալվելու։ Կատարվող Թալանները և կողոպուտները այնքան սովորական են դարձել, որ խաղաղ բնակիչները անհանգիստ ամեն օր սպասում են այդ ոճրագործների յարձակման։

—

Թիֆլիսի բնակիչ Մինաս Յովհաննիսեանի ազգականները յայտնեցին 6-րդ քաղաքամասի պրիստաւին, որ Յովհաննիսեանը հարբած լինելով և փակելով Վօրօնցովսկի փողոցի վրա գտնվող իր խանութը, անյայտացաւ և մայիսի 7-ից մինչև այսօր չի գտնված։

—

«Times» լրագրի Թղթակիցը, որ ազատ մուտք ունի Պետական Դումայի նիստերին, հաղորդում է, որ ինքը տեսել է Թէ ինչպէս բազմաթիւ պատգամաւորներ, Դումայի կուլուարներում, նրբանցքներում, սեղմել են ճապոնական մամուլի ներկայացուցիչի ձեռքը յայտնելու համար իրանց համակրութիւնը Եապոնիային, որի յաղթութիւնները պատերազմի դաշտում նպաստեցին ռուսների յաղթանակին բիւրոկրատիայի դէմ կռւի մէջ։

—

Լուր է պտտում, որ Տրեպովի խորհուրդով, առաջարկված է նահանգապետներին դրդել «իրաւակարգի» կուսակցութեան իսկական ռուս մարդկանց, միապետականների և այլն ընկերութիւնների տեղական բաժանմունքներին ամենահպատակ ուղերձ ներկայացնել, որով հարկաւոր է խնդրել «ամնիստիա չը տալ խռովարարներին և չը վերացնել մահվան պատիժը»։ Այդ լուրը հաստատվում է նրանով, որ վերջին ժամանակներս յիշեալ ընկերութիւնները այդպիսի խնդիրք, նոյնիսկ պահանջ, ներկայացրին։ Այդ խնդիրները միատեսակ են արտայայտված, այնպէս որ հաւանական է Թւում, որ դրանք կազմված են եղել նախօրօք միատեսակ ձևով։

—

Մայիսի 1-ից մինչև 5-ը Պետերբուրգում կալանաւորութիւններ են եղել կատարվում։ Կալանաւորների Թւում կան այնպիսիները, որոնց յանցանքը եղել է այն, որ «ամնիստիա» են աղաղակել։

—

Բարօն Կաուլբարսը մայիսի 3-ին հեռագրով զեկուցել է զինուորական մինիստրին, որ Իրմինսկի հանքերում, Սլաւեանօ-Սերբսկի գաւառում, գործադուլ է։ Յարաբերութիւնները լարվում են։

—

Մօտ օրերս Կրօնշտադտում զինուորական միտինգ է կայացել։

—

Մանկական կօլօնիաների ընկերութիւնը յունիսի 1-ից բաց է անում Եալտայի շրջակայքում կլիմայական կօլօնիա։ Կօլօնիայում ընդունվում են երկու սեռի մանուկներ սկսած 7—15 տարեկանը, որոնք բժշկի վկայութեամբ կարող են պարապվել մտաւոր աշխատանքով. կազմակերպված են զանազան առարկաների դասաւանդութիւններ։ Կազմակերպվում են նոյնպէս շարժական խաղեր և աշխատանքներ այգում։ Միջոցների սղութեան պատճառով ընկերութիւնը առ այժմ ստիպված է վերցնել բաւականին բարձր գներով (ամսական 45 րուբլի), որ ի հարկէ, դժբաղդաբար, կօլօնիան միանգամայն անմատչելի է դարձնում չքաւոր մանուկների համար, որոնք աւելի կարիք ունեն այդպիսի կօլօնիաների։

—

Պետերբուրգում Վիների մեքենայական գործարանում բանուորների մէջ յուզումներ են սկսվել։ Պատճառը այն է, որ գործարանի վարչութիւնը աշխատանքի ժամերը 9-ից աւելացրել է 10-ի, և 17 բանուորներին արձակել է գործից մայիսի 1-ին գործադուլին մասնակցելու համար։

—

«Рѣчь» Թերթը հաղորդում է, որ Դեմեանսկի գաւառում անկարգութիւնները ճնշելու համար ուղարկված առաջին վաշտ զինուորները հրաժարվել են կրակ բանալ ամբոխի վրա։ Նրա փոխարէն ուղարկվել է ուրիշ վաշտ։

—

«Рус. Сл.»-ի Թերթին հեռագրում են Բերլինից, որ «Vos. Zeit»-ի Պետերբուրգի Թղթակիցը հաղորդում է իր տպաւորութիւնները, որ ստացել է նա մինիստրների հետ ունեցած խօսակցութիւնից։ Մինիստրները նրան այն կարծիքն են յայտնել, որ գահական ճառի պատասխան ուղերձը, այն ձևով, ինչ ձևով, որ մշակել է 33 հոգուց բաղկացած մասնաժողովը, չէ կարող նոյն իսկ քննութեան նիւԹ լինել։ Պետական Դուման փակելու հրամանը, մինիստրների կարծիքով, կը տրվի մօտ օրերս։

—

«Рус. Сл.» Թերթի Պարիզեան Թղթակիցը հեռագրում է, որ իրան ցոյց են տուել Պետերբուրգի ռէակցիոն կուսակցութեան մի աչքի ընկնող ներկայացուցչի նամակը, որի մէջ ասված է. «Հաւատացէք, որ աւելի շուտ ույժով կը վռնդեն այն «խօսնարանը», քան կը համաձայնվեն ընդունել մինիստրների պատասխանատուութեան ծրագիրը Պետական Դումայի առաջ»։ Նամակի հեղինակի ասելով վճռված է նոյնպէս պահպանել Պետական Խորհուրդը։ Ինչպէս հաղորդում է Թղթակիցը, այդ նամակը գրել է «կամարիլյայի» անդամներից մէկը։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. Երէկ, մայիսի 7-ին, կիրակի, Հին-Նախիջևանի հայ հասարակութիւնը հրաժեշտի ճաշ տուեց տեղիս յաջորդ բազմաշխատ, եռանդուն Թովմա վարդապետին, որ այս օրերս պէտք է մեկնի իր նոր պաշտօնատեղին։ Ճաշին ներկայ էր և նոր յաջորդ Լևոն վարդ. Փսերեան. խօսվեցան շատ ճառեր, որոնց մէջ շեշտվում էր Թովմա վարդապետի Հին-Նախիջևանի և նրա գաւառի հայ ժողովրդի ծանր տագնապի ժամանակ ցոյց տուած անդուլ և արդիւնաւոր գործունէութիւնը։ Պէտք է յուսալ, որ նոր յաջորդն էլ իր եռանդով ետ չի մնայ իր նախորդից։

—

ԴԻԼԻՋԱՆ, մայիսի 11-ին։ Ահա վերջնական ցուցակը Ղազախի լիազօրների, որոնք պէտք է ընտրեն Գանձակում Պետական Դումայի համար անդամներ. 1) հողատէրերի կողմից Մամէդ-աղա Փանախ-օղլի Վէկիլօվ, գիւղացիների կողմից. 2) Մօլլա-Հասան Նասիբ-օղլի (Ղայմախլուեցի), 3) Աբբաս Հասան-օղլի Փօլադով (աղբիօյնակցի), 4) Յովսէփ Աղաբէկեան Թումանեան (քարվանսարեցի), Վարդանեան Ռուստամ (Ջամբարակցի)։ Չենք կարծում, որ սրանք որոշ ուղղութեան կամ կուսակցութեան մարդիկ լինեն։ Ժողովրդի ճնշված դրութիւնը արգելք եղաւ գիտակցաբար վերաբերվելու ընտրութիւններին։

—

Երէկ, մայիսի 12-ին, երեկոյեան ժամը 6-ին անյայտ չարագործները ատրճանակի մի քանի հարուածներով տեղնուտեղը սպանեցին հարուստ վաճառական Գէորգեանին։—Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, մի չարագործ դաշոյնով վիրաւորեց կօշկակար Բօյաճեանին երբ նա պատրաստվում էր փակել իր խանութը։ Չարագործը ձերբակալված է։—Նոյն այդ օրը երեկոյեան ժամը 5½-ին Կազբէկսկի փողոցում մի գիմնազիստ Տուխարէլի ազգանունով, սպանեց դաշոյնով մի Չրկիրի։

—

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հինգշաբթի, մայիսի 11-ին, Մատինօվսկի փողոցում Գունիայի տանը Մաթիաշվիլիի բնակարանը, նրա բացակայութեան ժամանակ, նրա կնոջ մօտ եկել են 5 զինված խմբէշներ և ատրճանակով սպառնալով և ձեռքին բռնելով ներկված գնդակներ, իբր ռումբեր, սկսեցին խուզարկել բնակարանը։ Չարագործները վերցրել են 40 րուբլի կանխիկ փող և մի քանի Թանգագին իրեր և անյայտացել են։

—

Մայիսի 8-ին, երեկոյեան ժամը 5-ին, Շինդիս գիւղից (Թիֆլիսի գաւ.) Կօջօրսկի փողոցով Թիֆլիս եկող Իսակ Տէրտէրեանի վրա բօտանիկական այգուց քիչ բարձր յարձակվեցին 2 անյայտ տեղացիներ, և վայր ձգելով նրան և սրերով սպառնալով, խլեցին նրանից չերքեսկան և մօտը եղած 4 րուբլի փողը և փախան դէպի բօտանիկական այգին։ Ոստիկանութեանը յաջողվեց ձերբակալել նրանց։ Նրանցից մէկը Թիֆլիսի գաւ. բնակիչ Անդրէյ Գօգիձէն է, իսկ միւսը—Դուշեթի գաւ. բնակիչ Ն. Կապլաշվիլի։ Նրանք խոստովանեցին, որ իրանք են եղել և մատնացոյց արին 3-րդի վրա, որը անյայտացաւ։

—

Մայիսի լոյս 9-ի գիշերը Ն. Լգօտակի խանութից, (Վերայի զարիվեր Խանդաձէյի տուն) կոտրելով կողպէքը, գողացել են երեք կարի մեքենաներ 215 րուբլի արժողութեամբ։

—

Տաբիեշկի փողոցում բնակվող Եօսիֆ Բօգաշվիլիի բնակարանը, նրա բացակայութեան ժամանակ մտել է մի անյայտ չարագործ և մա՛հվան սպառնալիքով փող պահանջել։ Բօգաշվիլին սաստիկ վախեցաւ և տուեց անյայտին իր մօտ եղած 117 րուբլին։ Չարագործը, վերցնելով փողը անյայտացաւ։

—

Մայդանում բակալէյնի խանութ ունեցող Ալեքսանդր Խուլուաշեանի խանութը նման բանալիով բանալով, գողացել են 1000 րուբլու զանազան ապրանք և կասայից 472 րուբլի 32 կօպէկ կանխիկ դրամ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիսի։ Այսօրվայ առաւօտեան կարգադրիչ նիստում վճռված է նիստի դահլիճում նախորոշել տեղերը, որով պատգամաւորները խմբակների կը բաժանվեն։ Ամեն մի խմբակ ընտրում է իր բիւրօն, որը և որոշում է իր խմբակի պատգամաւորների տեղերը։ Այդպիսով, սկսեալ յետագայ նիստից, կուսակցութիւնները կունենան իրանց որոշեալ տեղերը։ Դումայի բոլոր անդամներին բաժանված են զանազան Թերթիկներ, որոնց մէջ պատգամաւորները գրելու են իրանց տարիքը, անունը, ազգանունը, բնակութեան տեղը, իրանց կենսագրութեան մանրամասնութիւնները, որովհետև մտադրութիւն կայ հրատարակել մի յիշատակարան, որի մէջ կը տպվեն այդ բոլոր տեղեկութիւնները։ Թէ Դուման ինչ յարաբերութիւններ պէտք է ունենայ մամուլի ներկայացուցիչների և սրանց տեղերի նախորոշման վերաբերմամբ—այդ հարցը չը քննվեց և յետաձգվեց յետագայ կարգադրիչ նիստին։ Դումայի 11-ի բաժանմունքների նիստերը, որոնց ժամանակ քննվելու է պատգամաւորների ընտրութիւնների ստուգութեան հարցը, սկսվեցին միաժամանակ ցերեկվայ ժամը 2-ից։ Իւրաքանչիւր բաժինը խորհրդակցում է առանձին դահլիճում, մասամբ էլ դիւանատան շէնքում։ Նիստերը փակված են, նրանց հետևանքների մասին Դումային կը զեկուցվի հետևեալ բաց ժողովին, որը, երևի, կը կայանայ ուրբաթ, առաւօտեան ժամը 11-ին։

10 մայիսի

ԼՈՆԴՈՆ, 9 մայիսի։ Քննելով անգլօ-ռուսական համաձայնութեան հարցը «Весмини. Газета» լրագիրը ասում է, որ Ռուսաստանի ներքին ճգնաժամը պէտք է ժամանակաւորապէս կլանէ ռուսաց պետական գործիչների ամբողջ եռանդը։ Լրագրի ասելով, եԹէ Պետական Դուման առաջվայ նման կը գործէ վերջին օրերում երևան հանած զգուշութեամբ, այն դէպքում անցողական շրջանը կը վերջանայ աւելի շուտ, քան սպասում են։ Այն ժամանակ արդէն Անգլիան կարող կը լինի համաձայնութիւն կապել Ռուսաստանի հետ այն հաստատ հիմունքներով, որ ստեղծվեցին Մարոկկօյում տեղի ունեցած դէպքերը, Թուրքական ճգնաժամը և միջազգային կեանքի միացած փաստերը, որոնք յիշատակվեցին աւելի դրական հետևանքներով—քան դիպլօմատիական բողոքագրերը, և որոնք Ասիայի վերաբերմամբ բոլորովին ցանկալի համաձայնութեան ճանապարհ հարԹեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի։ Ներքին գործերի մինիստրի մօտ օրերս Դումա է մտցնելու տեղական ինքնավարութիւնները կազմակերպելու հարցի նկատմամբ իր կազմած օրինագիծը։—Քաղաքացիական պահանջալիագոր երդուեալ հաւատարմատար Աղամօլը՝ Օկունէվ օֆիցէրի գործը պաշտպանելու ժամանակ «Ռուս ժողովրդի Դաշնակցութիւն» կուսակցութեան հասցէին ուղղած մի քանի վիրաւորական խօսքերի համար—մենամարտի հրաւիրվեց երդուեալ հաւատարմատար Բուլացէլի կողմից։

ՎԻԵՆՆԱ, 9 մայիսի։ Պատգամաւորների պալատում, կառավարչական յայտարարութեան առԹիւ Դզօդուշիցկին ասաց, որ լեհական վերաբերմունքը դէպի նոր կառավարութիւնը կախված կը լինի նրանից, Թէ կառավարութիւնը Գալիցիայի լեհ ազգի կարիքների վերաբերեալ հարցում ինչ ուղղութիւն կը բռնէ։ Ընտրողական բարենորոգման առԹիւ Նաեառորն յայտնեց, որ կառավարութիւնը, և կուսակցութիւնները—կլուբի օրինական պահանջներին բաւալարութիւն տալով միայն կարող են լեհերին հակցնել այդ բարենորոգման։

ՆՈՐ-ՕՍԿՈԼ, 9 մայիսի։ Բանտարկվածները կոտրելով բանտի դռները և պատուհանները 150 հոգով դրոհ տուին դէպի դուրս յեղափոխական երգեր երգելով, բայց դէմ առ դէմ եկած կօզակներից ստիպվեցան կրկին բանտ վերադառնալ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 9 մայիսի։ Վերջին երկու էտապով Սիբիր են ուղարկված քաղաքական 107 բանտարկեալներ։

ՍՕՖԻԱ, 9 մայիսի։ Կոմս Լամզդորֆի հրաժարականի առԹիւ իշխան Ֆերդինանդը մի հեռագիր է ուղարկել նրան, որի մէջ շնորհակալութիւն է յայտնում Բօլգարիայի մատուցած ծառայութիւնների համար, հաւատացնելով հանդերձ, որ միշտ շնորհապարտ կը մնայ դէպի նա։

ԼՈՆԴՈՆ, 9 մայիսի։ Համայնքների պալատում—Չինաստանում մաքսային վարչութիւնը հիմնելու առԹիւ արած հարցապնդման՝ Գրէյը յայտնեց, որ չինական ծովային մաքսատները սրանից յետոյ էլ կը մնան Ռօբերտ Գարտի կառավարութեան ներքոյ։ Այն հարցապնդման—մտադի՞ր է արդեօք կառավարութիւնը, ի նկատի ունենալով վերջին դէպքերը—վերաքննութեան ենթարկել Եգիպտոսի՝ դէպի Թիւրքիան ունենալիք վերաբերմունքի հարցը,—Գրէյը պատասխանեց, որ ներկայումս կառավարութիւնը մտադիր չէ այդ հարցը յարուցել։

ՎԻԵՆՆԱ, 9 մայիսի։ Կայսրը ռումենական Թագաւորին քառասնամեայ յոբելեանի առԹիւ ուղարկել է ինքնաձեռագիր մի նամակ—վերին աստիճանի ձոխ արտայայտութիւններով։

11 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիսի։ Յունվարի 1-ին «Արջ» հիւրանոցում ուսանող Դաւիդովին սպանող Օկունէվ սպան դատարանի վճռով դատապարտված է 4 ամեայ բանտարկութեան, բանտարկեալների ուղղիչ բաժնում, զրկվելով իրաւունքներից։—Պետերբուրգի դատաստանական պալատի յատուկ բաժիններից մէկում քննվեցին «Голосъ Фармацевта» շաբաթաթերթի խմբագիր Կլիաչենկոյի և «Обновленная Россія» Թերթի խմբագիր Զարինի գործերը. առաջինը մեղադրվում էր 129 յօդուածի հիման վրա, երկրորդը՝ 129 և 103 յօդուածների հիման վրա։ Կլիաչենկոն արդարացաւ. Զարինը դատապարտվեց միամեայ բանտարկութեան, զրկվելով 5 տարի շարունակ խմբագրի պաշտօնից, իսկ լրագիրը դադարեցված է ընդմիշտ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիսի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը զբաղվելով—դեռ կոմս Տօլստոյի մշակած բարձրագոյն դպրոցների բարենորոգման աշխատանքներով—կանգնել է այն հայեցակէտի վրա, որ պրոֆեսորների համագումարների մշակած համալսարանական կանօնադրութիւնների տեխնիքական բարձր կրԹական հաստատութիւնների, անասնաբուժական ինստիտուտների, կանանց բարձրագոյն դասընթացքների և կանանց բժշկական ինստիտուտի նախագծերը կարելի է յանձնել Պետական Դումային անկախ նրանից, Թէ կը համաձայնէ արդեօք և ինչ չափով—հէնց ինքը մինիստրութիւնը այդ նախագծերի հետ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 10 մայիսի։ Նահանգապետի հրամանով աքսորի դատապարտված բժիշկ Կրանցինֆելդը և Կուշկը ազատ են Թողնված։

ՍԻԶՐԱՆ, 10 մայիսի։ Փոքր Րիազան գիւղում այրվեցին 100 տնակներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիսի։ (Ուշացած)։ Պետական Դումայի յարուցած, ապրիլի 17-ին Թագաւոր Կայսրի գահական ճառին պատասխանող ուղերձի մէջ մտցրած և ռուսաց մամուլի մի քանի օրգանների պաշտպանած քաղաքական լիակատար ամնիստիայի հարցը ռուսաց հասարակութեան բոլոր խաւերում համակրանքի արձագանք չէ գտնում։ Չի կարելի չը յիշատակել, որ այժմ ազգաբնակութեան մի քանի դասակարգեր Թշնամաբար տրամադրված դէպի լիակատար ամնիստիան, մեծ եռանդով ընդդիմադրութիւն են ցոյց տալիս։ Հասարակական զանազան մեծ խմբակներ մատնացուցում են, որ քաղաքական սպանութիւնները չեն դադարում։ Հեռագիրը ամենայն օր շարունակում է լուրեր հաղորդել—մերթ պաշտօնական անձերի մահափորձերի, մերթ նրանց սպանութեան մասին։ Տերրորիստական կազմակերպութիւնների անդամների այնպիսի անհաշտ տրամադրութեան պատճառով կառավարութիւնը անկարող է չը հետևել տերրորիստներին և ոճրագործներին դատարանով, անկարող է ազատել դատարանի վճռով պատժված այն անձանց, որ գործել են քաղաքական քրէական յանցանքներ։ Իսկ ինչ վերաբերում է ադմինիստրատիւ կարգով բանտարկված անձանց, պէտք է ասել, որ այդպիսիներից մի մասը արդէն ազատ են, մնացածները էլ կազատվեն—ձերբակալութեան հիմք ծառայած պատճառների խիստ վերաքննութիւնից յետոյ։ Ադմինիստրատիւ կարգով բոլոր ձերբակալվածների լիակատար ներումն կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ օրէնսդրական կարգով վերացվեն արտակարգ և ուժեղացրած հսկողութիւնները, երբ դատաստանական քննութիւն կատարվի այն տեղերում, ուր երևան է գալիս յեղափոխական շարժում։ Դատաստանական ռեպրեսիաներ այդօրինակ տեղերում առայժմ անկարելի է գործադրել՝ դատարանում ներկայացած անձնաւորութիւնների սպանութիւնների և սարսափահարութեան պատճառով։ Սակայն, գլխաւորապէս ծայրագաւառներում գոյութիւն ունեցող մտքերի գրգռված տրամադրութիւնը չէ կարող նպաստել բացարիկ օրէնսդրութիւնների վերացման և վերաքննութեան։

Փոխ-ծովապետ Րօժդէստվենսկի, համաձայն խնդրագրի, հիւանդութեան պատճառով արձակվում է պաշտօնից, նշանազգեստով և Թոշակով. փոխ ծովապետ Գրիվէն նշանակվում է Պետերբուրգի նաւահանգստի հրամանատար։ Բարձրագոյն հրամանով հրամայված է Դումայի ընտրութիւնները կատարել Դաղստանի շրջանում՝ մայիսի 26-ին, Բաթումի շրջանում, Բագուի նահանգում և Բագու քաղաքում՝ մայիսի 31-ին։

ՀՌՕՄ, 11 մայիսի։ Հաստատվում է, որ Ջիօլիտտիին յանձնարարված է կաբինէտ կազմել։ Ենթադրում են, որ կաբինէտը կը կազմվի մի քանի օրից յետոյ։

ԲԱԹՈՒՄ, 11 մայիսի։ Ամերիկական հիւպատոս Ստիւարտի դիակը տարվեց գերեզմանատուն հանդիսաւորութեամբ, զինուորական պատիւներով. Թաղման ներկայ էին զօրապետների խումբը և բազմաթիւ ժողովուրդ։ Վերջ ի վերջոյ դին կը տեղափոխվի Անգլիա։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 11 մայիսի։ Օտար գործերի մասին զեկուցանող սենատի մասնաժողովի զեկուցագրի մէջ մտնում է և Նօկսի առաջարկութիւնը, Կ. Պօլսի միսիան դեսպանութեան դարձնելու մասին։

ՀՌՕՄ, 11 մայիսի։ Միջազգային պոստային կօնգրէսը վճռեց հետևեալ կօնգրէսը կայացնել Մադրիդում։

ԲԵԼՕՍՏՕԿ, 11 մայիսի։ Քաղաքի կենդրոնում զինված անձինք յարձակվելով Մէյլախի բանկային գրասենեակի վրա վերցրին մի փոքրիկ գումար, և վիրաւորեցին օգնութեան հասած ոստիկանին։ Յարձակվողներից մէկը բռնվեց։ Նրա մօտ գտնվեցին գողացված փողերը և մի ռումբ։

ՈՒՖԱ, 11 մայիսի։ Ուստ-Կատաւէվսկի գործարանի կառավարչի բնակարանը ռումբ է նետված։ Կառավարիչը վիրաւորված է, իսկ նրա կինը սպանված։ Ձերբակալված են երկու կասկածաւոր անձինք։

Այրվեց Կուսենսկու ամբողջ գործարանը։ Ոչ մի բան չազատվեց։ 6000 հոգի մնացին պարապ։

ՕԴԵՍՍԱ, 11 մայիսի։ Տպագրական գործի պրոֆեսիոնալ դաշնակցութեան քարտուղարի ձերբակալութեան պատճառով «Օդեսկի Լիստօկ» լրագրի գրաշարները գործադուլ արին, որի պատճառով մայիսի 11-ին լրագիրները լոյս չը տեսան։ Բանուորների պատգամաւորութեան միջնորդութեամբ ձերբակալված քարտուղարը ազատութիւն ստացաւ և գրաշարները անմիջապէս աշխատանքը վերսկսեցին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏԵՆԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՋԻԺՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵՆԾ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՋԵԼԻՆՎ—12—1 ժ. ականջի, քԹի և կոկորդի
Ա. Գ. ՏԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Խ. Գ. ԱՐԵՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒԼՋԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնովսկի փողոց № 16։
(ու. կ. ե.) 1—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆՑԸ
Ընդունում է հիւանդներին կովկասեան հանքային ջրերում Պեատիգօրսկում։
Հասցէն Ելիզավետինսկայա փողոց, ռուսաց եկեղեցու մօտիկ Արխիպօվի տունը, որտեղ Գրուպպի գրասենեակն է։
2—20

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կազբեկսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազբեկսկի փողոցից № 2.
(ա. օ.) 146—300

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, մայիսի 14-ին, ցերեկվայ ժամ 12-ին, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցու ծխականները առաջին անգամ հրաւիրվում են եկեղեցի հետևեալ հարցերի առԹի
1. Ընտրել մի ներկայացուցիչ հայ-Թուրքական համաժողովի համար։
2. Վերջնական որոշումն կայացնել, հանգուցեալ Մարթա Շիլիկօվայի եկեղեցու անունով կտակած տան մասին։
3. Հաշիւ 1904—5 Թ.
4. Երէցփոխի զեկուցումը մի քանի կարևոր հարցերի վերաբերեալ. ժողովը չը կայանալու դէպքում յետաձգվում է հետևեալ կիրակի, մայիսի 21-ին։
Առանձին հրաւիրաթերթեր չեն լինելու։
(շ) 1—1

„Գուտտենբերգ“
գրախանութի հրատարակութեամբ
Լոյս տեսաւ
ՍՏ. ՊԱԼԱՍԱՆԵԱՆԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
(Մասն ա. բ. և գ.)
Հինգերորդ տիպ, գինն է 75 կ., պատուի ծախսով 1 րուբլի։
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну. 1—5

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան
Վարչութիւնը յայտնում է, որ երեքշաբթի, մայիսի 16-ին, երեկոյեան ժամը 8-ին ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площ. սեփ. տուն) նշանակված է աճուրդ հանգուցեալ Յով. Խուդադեանի ընկերութեանը կտակած Թիֆլիսի 5-րդ քաղաքամասում (угольная ул.) գտնված ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼՈՒ համար։ Պայմանների հետ կարելի է ծանօԹանալ ընկերութեան գրասենեակում բացի կիրակի օրից, ամեն օր առաւօտեան ժամը 10½-ից մինչև 2-ը։
(շ.կ.ե.) 1—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու ծխականները հրաւիրվում են առաջիկայ կիրակի, մայիսի 16-ին ծխական ընդհանուր ժողովի, ընտրելու պատգամաւորներ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւն կազմելու համար։ Ներկայ ժողովը շարունակութիւն է անցեալ կիրակի օրվայ ժողովի։ Ժողովի սկիզբն է ցերեկվայ ժամի 12-ին։
(հ. շ. կ.) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԷԿԵԱՆ
Ներքին եւ Ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12 և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 21—50

Նիւթական սաստիկ սուղ հանգամանքների պատճառով հնարաւորութիւն չունեմ իմ որդոցս ուսման ծախսերը հոգալ, որի պատճառով, ուսումնարանական վարչութեան որոշման համաձայն որդիքս հեռացրված են ուսումից, որոնցից մէկը տարեկան 2-րդ արական գիմնազիայից, միւսը 17 տարեկան ռէալական դպրոցից, բարեմիտ անձանց ուշադրութիւնն դարձնում դէպի իմ որդոցս կրԹական գործը և խնդրում եմ կարեկից հանդիսանալ և օգնութեան հասնել, որպէս զի ուսումնարանից յետ չը դարձնեն որդոցս և հնարաւորութիւն տան նրանց շարունակելու Թերի մնացած ուսումը։
Բարեմիտ անձինք, որոնք կարող են օգնել, Թող դիմեն «Մշակի» խմբագրատունը։ 2—

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապր
Բագուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 12 ր
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր
Կարս հասնելը.	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր

Կիրակի, մայիսի 14-ին
Թիֆլիսի Ժողովարանի ամառային շինութեան մ
ՅՕԳՈՒՏ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
տեղի կունենայ
ՋԲՕՍԱՆՔ
բարեգործական վաճառք և վիճակախաղ-ալլեգրի
ՏՈՄՍԱԿԻ ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
կարթ, ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ (իշուկի կառք) Զինուորական նուագ և ստրունի օրկեստր, Բուֆէտ, կօնֆէտառի, ծաղիկների վաճառումն։ Մանկական ՊԱՐԵՐ պ. Ինօչենցայի ղեկավարութեամբ։
Զբօսանքի սկիզբն է, ցերեկվայ ժամը 3-ին
Մուտքի գինն է 30 կօպ. երեխաներից և ուսանողներից 15 կօպ.։ 1—2
(շ.կ.)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ
ՊԱՀԵՍՏՈՒՄ,
Մուշտայիդ այգում, վաճառվում է ՇԵՐԱՄԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄ գեղին և սպիտակ տեսակի, մսխալը 40 կոպ.
Թթենիներ, այգեպահական և շերամապահական գործիքներ
ՋԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐ,
Մեղուապահական գործիքներ,
ԴԱԴԱՆ-ԲԼԱՏՏԻ ԵՒ ԳԵՏԴՕՆԻ ՓԵԹԱԿՆԵՐ, ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ 4 ՌՈՒԲԼ
ՍԿՍԱԾ։ Մեծ քանակութեամբ գնողներին զիջումն է լինում։
Արհեստական մոմաթերթ, (вощина) գործիքներ, ցենտրափուգներ, նկարներ, քար
ներ, ձեռնարկներ և այլն։
Գների ցուցակը ուղարկվում է ՁՐԻ։
(ե.հ.շ.) 25—25

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15